Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք հանրակրթական դպրոցի
4-րդ դասարանի համար

ԴԱՍԱԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ
ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՍԻՄՈՆԸ՝
Ի ՍԵՐ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻ՝ ԵՐԱԽՏԱՇԱՏ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 373.167.1:23/28 (479.25)(075)
ԳՄԴ 86.37 (2Հ) g 72
Ղ 952

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի համար

Դասագիրքը Հայ Առաքելական եկեղեցու և Կրթության և գիտության նախարարության սեփականությունն է, ենթակա չէ վաճառքի:

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմ

Խմբագիրներ՝

Պ.Հովհաննիսյան *պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյան

Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդ

Վ. Մարտիրոսյան *բանասիրական գիտությունների թեկնածու*

Վ. Ղանդիլյան

Ղևոնդ քահանա Մայիլյան

Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս

Հեղինակներ՝

Ա.Ղուկասյան գլուխ 1, 2

Վ.Պարսամյան գլուխ 3, դաս 12-24

Ա.Գյուլբուդաղյան գլուխ 3, դաս 25-28

Ղ 952 Հայոց եկեղեցու պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի համար / Վ. Ղանդիլյան, Վ. Պարսամյան, Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան.- Եր.: Կրթական բարեփոխումների կենտրոն, 2003. – 96 էջ:

Ղ 4306022200 / 0149(01)-2003 2003 թ. ԳՄԴ 86.37 (2Հ) g 72

ISBN 99930-998-0-5

© ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
© ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2003

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի աշակերտներ, դուք սկսում եք մի դասընթաց, որը կոչվում է «Հայոց եկեղեցու պատմություն»: Այս դասընթացի միջոցով դուք կծանոթանաք Աստվածաշունչ մատյանին, Հիսուս Քրիստոսի կյանքին ու գործունեությանը, Հայոց եկեղեցու պատմության առավել կարևոր դրվագներին, տոներին ու խորհուրդներին:

Հայերը քրիստոնյա ժողովուրդ են

301 թվականին աշխարհում առաջինը հայ ժողովուրդը պետականորեն ընդունեց քրիստոնեությունը:

Մինչ քրիստոնեությունը մեր նախնիները, ինչպես աշխարհի շատ ժողովուրդներ, հեթանոսական կրոնի հետևորդներ էին: Նրանք հավատում և աստված էին համարում Հայկին, Արային, Տորքին, Աստղիկին, Վահագնին, Արամազդին, Անահիտին, Տիրին, որոնց վերագրում էին տարվա եղանակների փոփոխությունները, ցերեկը և գիշերը, բնական երևույթները, տեղի ունեցող պատերազմները և այլն: Բնական երևույթների աստվածացումը և կուռքերի պաշտամունքը կոչվում է հեթանոսություն: Հեթանոսական աստվածներին պատկերող կուռքեր* էին պատրաստում, դրանց զոհեր մատուցում, տաճարներ կառուցում: Հիսուս Քրիստոսի ու նրա առաքյալների քարոզչությամբ շատ ժողովուրդներ, այդ թվում և հայերը, որպես միակ և ճշմարիտ ուսմունք, ընդունեցին քրիստոնեությունը: Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար վիթխարի դեր ու նշանակություն ունի: Այն մեծապես նպաստել է Հայաստանում մշակույթի՝ արվեստի, ճարտարապետության, գիտության և կրթության զարգացմանը: Կառուցվել են հոյակերտ բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր: Վանքերին կից հիմնվել են դպրոցներ, համալսարաններ, զարգացել են մատենագրությունն ու մանրանկարչությունը, գիտության տարբեր ճյուղեր:*

Դասագրքի կառուցվածքը և նպատակը

Այս դասագրքի միջոցով դուք կիմանաք, թե ինչպես է կազմվել և մեզ հասել քրիստոնյաների Սուրբ գիրքը՝ Աստվածաշունչ մատյանը: Կծանոթանաք նաև աշխարհի ստեղծման, ջրհեղեղի, Բաբելոնյան աշտարակաշինության, ժողովուրդների առաջացման մասին աստվածաշնչային պատմություններին:*

Գարեգին Բ
Ամենայն Հայոց կաթողիկոս

Նաև կսովորեք, թե ով է Հիսուս Քրիստոսը, և ինչ էր նա ուսուցանում մարդկանց, ինչպես նաև շատ այլ հարցերի պատասխաններ կստանաք:

Աստվածաշնչից ու այլ գրքերից ընտրվել և ներկայացվել են ձեզ համար հետաքրքրական և հիշարժան պատմություններ: Յուրաքանչյուր դաս մի այդպիսի հետաքրքրաշարժ պատմություն է: Այնուհետև տրված են հարցեր և առաջադրանքներ, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ և ամրապնդել սովորածը: Իսկ դասի վերջում տրվում են լրացուցիչ նյութեր, որոնք շատ ուսանելի և ուշագրավ տեղեկություններ կհաղորդեն ձեզ:

Հեղինակներ

Բառարան

Աստվածացնել – մեծարել, փառքի ու պատվի արժանացնել, համարել աստված:

Սուրբ գիրք – Աստվածաշունչը՝ քրիստոնյաների նվիրական, սրբազան գիրքը:

Կուռք – փայտից, քարից, մետաղից կամ այլ նյութից պատրաստված արձան, որին վերագրվում էր գերբնական կարողություն:

1. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Կան գրքեր, որոնք բոլոր ժամանակներում էլ սիրելի ու հարազատ են մարդկանց: Այդպիսի գրքերից է նաև **Աստվածաշունչը**: Աստվածաշունչը քրիստոնյաների **Սուրբ գիրքն** է և նշանակում է Աստծու շնչով գրված: Աստվածաշունչը շուրջ 40 հեղինակների կողմից տարբեր ժամանակաշրջաններում գրված գրքերի ժողովածու է: Աստվածաշնչում ներկայացված են Աստծու և մարդկանց փոխհարաբերությունների պատմությունը, ինչպես նաև բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ, նրանց մշակույթը, կյանքն ու կենցաղը: Աստվածաշնչի բոլոր գրքերում կարմիր թելի նման անցնում է մարդկության Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու և մարդկանց փրկելու գաղափարը:

Աստվածաշունչ՝ գրված պապիրուսի վրա

Աստվածաշունչը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կոչվում է **Հին կտակարան,** իսկ երկրորդը՝ **Նոր կտակարան**: Հին կտակարանը գրվել է **Քրիստոսից առաջ**, իսկ Նոր կտակարանը՝ **Քրիստոսից հետո**:

Հին կտակարան

Հին կտակարանը բաղկացած է **48** գրքերից:

Հին կտակարանի առաջին հինգ գրքերը միասին կոչվում են **Հնգամատյան** կամ **Օրենք**: Հնգամատյանում արտացոլված են Աստծու կողմից մարդկանց համար սահմանված կանոններն ու օրենքները: Գրքերի հաջորդ խումբը պատմում է տարբեր երկրների ու ժողովուրդների մասին, այդ իսկ պատճառով կոչվում է **պատմական**: Պատմության գրքերին հաջորդում են **բանաստեղծական** ու **բարոյախրատական** գրքեր, որոնք բովանդակում են ուսուցողական առակներ, իմաստուն մտքեր, երգեր ու բանաստեղծություններ: Հին կտակարանի վերջին գրքերը կոչվում են **մարգարեական,** որոնցում ուսուցանվում էին Աստծու պատվիրանները* և արվում ապագայի կանխատեսումներ:

Աստվածաշունչ՝ գրված մագաղաթի վրա

Այսպիսով՝ Հին կտակարանը կազմված է Հնգամատյանից, պատմական, բանաստեղծական, բարոյախրատական և մարգարեական գրքերից:

Նոր կտակարան

Նոր կտակարանը բաղկացած է **27 գրքերից**: Առաջին չորս գրքերը կոչվում են **Ավետարաններ**, իսկ հեղինակները՝ ավետարանիչներ **(Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես): Ավետարան նշանակում է ավետիս,** այսինքն՝ բարի լուր: Այդ գրքերը մարդկանց ավետում են Հիսուսի ծնունդը, նրա կյանքն ու գործերը, նրա պատվիրանները: Մյուս գրքերում պատմվում են առաքյալների* գործերի, քարոզչության և տարբեր երկրներում քրիստոնեության տարածման մասին:

Աստվածաշնչի տարածումը

Աստվածաշունչը ամենաշատ թարգմանված և ամենաշատ ընթերցվող գիրքն է: Այն թարգմանվել է գրեթե բոլոր լեզուներով՝ասորերեն, հայերեն, լատիներեն, ռուսերեն, անգլերեն և այլն: Աստվածաշունչը հայերեն են թարգմանել մեր մեծ ուսուցիչներ սուրբ* **Մեսրոպ Մաշտոցն** ու սուրբ **Սահակ Պարթևը**՝ իրենց աշակերտների հետ միասին, V դարի սկզբին: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվում է լավագույնը և անվանվում է **«Թարգմանությունների թագուհի»**:



Նոր կտակարանի ոսկեզօծ կազմ

Սկզբում Սուրբ գիրքը եղել է ձեռագիր: XV դարի կեսերին, երբ կատարվեց տպագրության գյուտը, ձեռագիր մատյաններն սկսեցին տպագրել: **Աստվածաշունչը դարձավ աշխարհում առաջին տպագիր գիրքը:** Այն առաջին անգամ հայերեն տպագրվել է 1666-1668թթ.:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ է Աստվածաշունչը:
2. Ի՞նչ գրքերից է կազմված Հին կտակարանը:
3. Ո՞ւմ մասին է պատմում Նոր կտակարանը:

Աստվածաշունչ մատյան

5. Ովքե՞ր են Աստվածաշնչի հայերեն թարգմանության հեղինակները:
6. Ո՞րն է առաջին տպագիր գիրքն աշխարհում:
7. Ե՞րբ է տպագրվել հայերեն առաջին Աստվածաշունչը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Ի՞նչ պատմություն գիտեք Աստվածաշնչից: Ի՞նչն է ձեզ ամենից շատ դուր եկել:

Հարստացնենք մեր բառապաշարը

Սուրբ գիրք, Հին կտակարան, Նոր կտակարան, Ավետարան, մարգարեական, պատվիրան, առաքյալ:

Բառարան

Պատվիրան – ուսուցում, խորհուրդ, պատգամ, Աստծու կամք, որը պետք է կատարվի:
Առաքյալ – առաքված, ուղարկված: Առաքյալներ անվանվեցին Քրիստոսի 12 աշակերտները, որոնք ուղարկվեցին քարոզելու քրիստոնեությունը:
Սուրբ – մաքուր, անարատ, անբիծ:

Հին կտակարան

2. Աշխարհի և մարդու ստեղծումը

Մենք երկիր մոլորակի բնակիչներն ենք: Երկիրը մի հոյակապ ու գեղեցիկ մոլորակ է, զարմանահրաշ աշխարհ՝ լի բույսերով ու կենդանիներով, մարդկանցով ու ժողովուրդներով: Ո՞վ է ստեղծել, կամ ինչպե՞ս է առաջացել այդ ամենը:

Աստվածաշնչում այդ մասին գրված է:

Աստված ստեղծում է կենդանիներին:

Աշխարհի և մարդու արարումը

Ամենուրեք խավար էր և **քաոս***: Ո՛չ ծառ կար, ո՛չ բուսականություն, չկային այսօրվա հիանալի ծաղիկներն ու թռչունները, կենդանիները, մարդիկ, նույնիսկ երկիրն ու երկինքը չկային: Աստված չցանկացավ, որ այդպես լինի, և արարեց այս հրաշալի ու հոյակապ աշխարհը: Սկզբում նա ստեղծեց երկինքն ու երկիրը, լույսը բաժանեց խավարից, ցամաքը՝ ջրից: Հետո Աստված ստեղծեց արեգակն ու աստղերը, բուսական ու կենդանական աշխարհը: Վերջում Աստված իր նմանությամբ ստեղծեց մարդուն:

Հրեշտակները դրախտում

Ադամ և Եվա

Ադամի ու Եվայի արտաքսումը դրախտից

Իր ստեղծած առաջին մարդուն՝ **Ադամին**, Աստված բնակեցրեց **դրախտում***: Դրախտը մի հրաշալի պարտեզ էր՝ մրգաշատ ծառերով ու անուշահոտ ծաղիկներով զարդարված: Դրախտի միջով հոսում էին չորս գետեր: Ըստ ավանդության՝ այդ գետերը սկիզբ են առնում Հայաստանից, և այդ հրաշք պարտեզը գտնվում էր **Հայոց աշխարհում**: Դրախտի կենտրոնում վեր էր խոյանում կենաց ծառը*: Այստեղ էր աճում նաև բարու և չարի իմացության ծառը: Դրախտում Ադամը երջանիկ չէր, որովհետև մենակ էր: Աստված որոշեց նրան ընկեր ու օգնական տալ և ստեղծեց **Եվային**: Ադամն ու Եվան դրախտում ապրելու էին բարի, երջանիկ ու անմահ կյանքով: Նրանք կարող էին օգտվել բոլոր բարիքներից, որովհետև դրանք Աստված նրանց համար էր ստեղծել, բացի բարու և չարի ծառի իմացության պտուղներից: Աստված պատվիրել էր, որ այդ ծառի պտուղներից չուտեն, այլապես կզրկվեն դրախտային կյանքից: Սակայն օձի սադրանքով Եվան պոկեց արգելված պտուղը, կերավ և Ադամին էլ տվեց: Աստված զայրացավ, որ նրանք խախտեցին իր պատվիրանը և անհնազանդ գտնվեցին: Աստված անիծեց Ադամին ու Եվային և նրանց վտարեց դրախտից:

Դրախտից վտարվելուց հետո Ադամն ու Եվան բնակություն հաստատեցին ոչ հեռու գտնվող փշով ու տատասկով ծածկված մի վայրում: Նրանք մեծ չարչարանքով մշակեցին այդ հողը և քրտինքով վաստակեցին օրվա հացը:

Ադամից ու Եվայից սկիզբ առավ ողջ մարդկությունը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞րն է մեր մոլորակը: Ինչպիսի՞ն է այն:
2. Ըստ Աստվածաշնչի՝ ո՞վ է ստեղծել աշխարհը:
3. Ովքե՞ր են առաջին մարդիկ:
4. Որտե՞ղ էին ապրում նրանք:
5. Ըստ ավանդության՝ որտե՞ղ էր գտնվում դրախտը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Նկարագրե՛ք դրախտը:
2. Ինչո՞ւ Ադամը և Եվան վտարվեցին դրախտից:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Կուզեի՞ք, որ Հայաստանը նման լիներ դրախտի: Ինչո՞ւ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
2. Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել աշխարհը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Արարչագործություն, դրախտ, կենաց ծառ, արգելված պտուղ:

Բառարան

Քաոս – անկանոն, անկարգ, խառնակ վիճակ:
Կենաց ծառ – կյանքի ծառ, որի պտուղները, ըստ Աստվածաշնչի, պարգևում են անմահություն:
Դրախտ – աստվածային պարտեզ, այգի:

3. ՆՈՅԸ ԵՎ ՋՐՀԵՂԵՂԸ

Ադամից ու Եվայից հետո անցան շատ տարիներ: Նրանց սերունդները բազմացան ու տարածվեցին աշխարհով մեկ: Բայց աստիճանաբար մարդիկ սկսեցին հեռանալ Աստծուց ու նրա կամքին հակառակ վատ արարքներ գործել: Սակայն Նոյը միայնակ չէր կարող կանխել մարդկանց մեջ աճող նախանձն ու չարությունը: Քանի որ մարդիկ շատ էին չարացել ու շեղվել ճիշտ ճանապարհից, Աստված որոշեց ջրհեղեղի միջոցով պատժել նրանց:


Նոյան տապան

Տապանի կառուցումը

Աստված չէր ցանկանում իսպառ վերացնել իր ստեղծած աշխարհը և մարդկանց: Նա տեսավ, որ միայն **Նոյ** անունով մի արդար ու բարի մարդ է հավատարիմ մնացել իրեն, ուստի մարդկանց ջրհեղեղով պատժելուց առաջ պատվիրեց նրան կառուցել մի մեծ **տապան***:

Նոյը, առանց ժամանակ կորցնելու, սկսեց տապանի կառուցումը: Այդ ընթացքում նա հաճախ էր իր շրջապատի մարդկանց հիշեցնում սպասվող ջրհեղեղի մասին և կոչ անում **զղջալ*** կատարած չարագործությունների համար: Բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա ասածներին:

Երբ տապանն արդեն պատրաստ էր, Աստված պատվիրեց Նոյին վերցնել իր ընտանիքը և մեկական զույգ բոլոր ցամաքային կենդանիներից, թռչուններից ու մտնել տապանի մեջ: Նոյն այդպես էլ արեց:

Ջրհեղեղ

Սկսվեց ջրհեղեղը, և քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև տեղաց: Ողջ երկիրը ծածկվեց ջրով: Ջուրն այնքան բարձրացավ, որ տապանն սկսեց լողալ նրա երեսին: Անգամ բարձր լեռներն անցան ջրի տակ: Ոչնչացավ այն ամենը, ինչ գոյություն ուներ աշխարհի վրա: Մնացին միայն Նոյի տապանի մեջ գտնվողները: Քառասուն օր հետո անձրևը կտրվեց, ջրհեղեղը դադարեց: Բայց դեռ շատ երկար ժամանակ ջրերը չէին ցամաքում: Այնուհետև ջրերն աստիճանաբար նվազեցին, երևացին լեռների կատարները: **Նոյան տապանը** երկար նավարկելուց հետո կանգ առավ **Արարատ** լեռան

վրա: Որոշ ժամանակ սպասելուց հետո Նոյը ցանկացավ իմանալ, թե ջրերը որքան են իջել: Այդ լուրը ավետեց նրա բաց թողած աղավնին, որ վերադարձավ՝ կտուցին ձիթենու մի շյուղ բերելով: Նոյը հասկացավ, որ ջուրը նվազել է: Յոթ օր նա սպասեց և նորից բաց թողեց աղավնուն: Աղավնին այլևս չվերադարձավ: Ամեն ինչ պարզ էր. ջուրը քաշվել էր, և երկիրը՝ ցամաքել:

Նոյն ամբողջ ընտանիքով, կենդանիներով ու թռչուններով դուրս եկավ տապանից: Կենդանիները և թռչունները ցրվեցին աշխարհով մեկ: Աստված օրհնեց Նոյին ու նրա որդիներին և **ուխտ*** հաստատեց նրանց հետ, որ այլևս ջրհեղեղով չի պատժի մարդկանց:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞վ էր Նոյը, ի՞նչ կարող եք ասել նրա մասին:
2. Քանի՞ օր տևեց ջրհեղեղը:
3. Որտե՞ղ կանգ առավ Նոյան տապանը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Ինչո՞ւ տեղի ունեցավ ջրհեղեղը:
2. Ինչպե՞ս իմացավ Նոյը երկրի ցամաքելու մասին:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Դասի նկարի օգնությամբ փորձե՛ք նկարագրել Նոյան տապանը:
2. Եթե նավում բոլոր կենդանիները չտեղավորվեին, դուք ո՞ր կենդանիները կընտրեիք:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ջրհեղեղ, Նոյան տապան, Նոյան աղավնի, ձիթենու շյուղ, զղջալ, ուխտ:

Բառարան

Տապան – նավ:
Ձղջալ – վատ արարքների համար ափսոսալ:
Ուխտ – պայման, դաշինք, համաձայնություն:

Լրացուցիչ նյութ

ԱՐԱՐԱՏԻՆ

Որպես երազ լուսեղեն
Ձյունապայծառ ու շողուն
Դո՛ւ, անխորտակ ապավեն
Հրաճարակ մեր հոգուն,
Կանգնի՛ր, անկյալ ժողովուրդ,
Եվ հավատա՛, և տոկա՛,
Կա քո վշտում վեհ խորհուրդ
Եվ Խաչվածին մահ չկա,
Պարզվի՛ր պայծառ դեպի վեր,
Ցոլա՛ հրով անարատ,
Երկրիս մոխիր ու ավեր
Դո՛ւ անմահ սիրտ, Արարա՛տ ...

Վահան Տերյան

4. Արարատ լեռը

Նոյը իջնում է Արարատի գագաթից

Ջրհեղեղից հետո Նոյի տապանը կանգ է առնում **Արարատ** լեռան վրա: Նոյն ու նրա ընտանիքը դուրս են գալիս տապանից և իջնում Արարատից: Ավանդությունը պատմում է, որ նրանք բնակություն հաստատեցին Արարատ լեռան շրջակա վայրերում: Այստեղ Նոյն իր որդիների՝ **Սեմի, Քամի** և **Հաբեթի** հետ կառուցեց գյուղեր և ավաններ: Այդ մասին են վկայում մեր հայրենիքի մի շարք բնակավայրերի անվանումները:

Նոյը իջնում է Արարատից:

Նույն ավանդությունը պատմում է, որ Արարատից իջնելիս Նոյը տեսավ ջրերից ցամաքած առաջին տարածությունը և բացականչեց **«Երև անդ»***: Նոյի իջևանած առաջին վայրը անվանվեց **Նախիջևան**: Արարատ լեռան լանջի մի խոնավ վայրում Նոյը տնկեց խաղողի առաջին **որթը***:

Նոյը երկրագործ էր, սիրում էր հող մշակել ու այգի տնկել և իր աշխատանքով առավել գեղեցկացնել Աստծու ստեղծած աշխարհը: Այսպես Նոյն ու նրա որդիներն ապրեցին երկար տարիներ:

Նոյի մահից հետո անցավ շատ ժամանակ: Նոյի սերունդները բազմացան ու ցրվեցին աշխարհով մեկ: Նրանք ապրում էին հանգիստ ու խաղաղ: Մարդիկ աշխատում էին, քրտինք թափում, բերք ու բարիք ստեղծում: Նրանք չմոռացան Աստծու ուխտը և Արարատ լեռը: Բոլոր մարդկանց համար այն համարվում է սիրելի ու սուրբ, մարդկության օրրան:

Արարատը հայերի համար

Արարատը առավել թանկ ու հարազատ անուն է հայերիս համար: Այն մեր հայրենի լեռն է: Մեր նախնիները ապրել ու արարել են նրա վեհ հայացքի ներքո: Հայոց **Տրդատ III** թագավորը սուրբ լեռան գագաթից մեծ քարեր է ցած բերել և դրել էջմիածնի **Մայր տաճարի** հիմքում: Նշանավոր գրող ու մանկավարժ **Խաչատուր Աբովյանը** բարձրացել է Արարատի գագաթը և հիացել նրա վեհությամբ: Գրեթե բոլոր ժամանակներում Հայոց պետության **զինանշանի*** վրա պատկերված է եղել Արարատ լեռը:

Խոր Վիրապի վանքը և Արարատ լեռը

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Որտե՞ղ բնակվեց Նոյը ջրհեղեղից հետո:
2. Ինչո՞վ էր զբաղվում Նոյ Նահապետը:
3. Ի՞նչ բանաստեղծություն կամ երգ գիտեք Արարատի մասին: Կարո՞ղ եք արտասանել կամ երգել դրանցից որևէ մեկը:
4. Ինչո՞ւ են բոլոր մարդիկ սիրում Արարատը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Փորձե՛ք նկարագրել «Նոյը իջնում է Արարատից» նկարը:
2. Ինչո՞ւ է Արարատը պատկերված մեր պետության զինանշանի վրա:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Եթե ձեզ հնարավորություն տրվեր, կբարձրանայի՞ք Արարատի գագաթը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Խաղողի որթ, զինանշան, Նախիջևան:

Բառարան

Երև անդ – այնտեղ երևաց: Ըստ ավանդության՝ այսպես է առաջացել Երևան քաղաքի անվանումը:
Խաղողի որթ – խաղողի տունկ, վազ:
Զինանշան – պետության, իշխանության խորհրդանիշ:

Լուսաբուծիչ նյութ

ԼԵՌԱՆ ԼԵԳԵՆԴԸ

Վաղուց, շատ վաղուց Հայոց աշխարհում ապրում էր մի քաջ ու խիզախ զորավար: Նրա անունը Արարատ էր: Երկար տարիներ նա իր 40 կտրիճների հետ միասին կռվել էր Հայոց երկրի թշնամիների դեմ, հաղթել նրանց և խաղաղ պահել հայրենի հողը: Անցան տարիներ: Արարատը դարձավ հարյուր տարեկան: Մոտեցավ վախճանի օրը: Նա ծնկի եկավ, համբուրեց հայրենի հողը և կյանքում առաջին անգամ արցունք թափեց: Հետո վեր պարզեց բազուկները և Աստծուց խնդրեց, որ իրեն լեռ դարձնի: Հազիվ էր արտասանել վերջին բառը, երբ Արարատ զորավարը լեռ դարձավ ու վեր խոյացավ մինչև կապույտ երկինքը: Նրա քաջերն էլ իր հետ լեռնացան: Ժողովուրդը լաց եղավ սպարապետի համար, և նրա արցունքից առաջացավ Մայր Արաքսը: Եվ Արաքսը հոսեց առաջ՝ պատմելու լեռ-հսկայի մասին, որին ժողովուրդն անվանեց Արարատ, իսկ երկիրը՝ Արարատյան աշխարհ:

Արարատ լեռը

5. ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյի որդիներն ու թոռները գնացին **Միջագետք***: Նրանք այնտեղ ապրում էին միասին ու համերաշխ: Բոլորն էլ խոսում էին նույն լեզվով:

Հետագայում մարդիկ դարձան հպարտ ու մեծամիտ: Նրանք այնքան էին գոռոզացել, որ ուզում էին բարձրանալ և հասնել Աստծուն: Այդ նպատակով Բաբելոն* քաղաքում սկսեցին աշտարակ կառուցել: Բարձրանում էին աշտարակի պատերը: Աստված զայրացավ մարդկանց վրա նրանց անհնազանդության ու գոռոզամտության համար: Նա վճռեց խափանել աշտարակի կառուցումը և բաժանեց մարդկանց լեզուները: Մարդիկ սկսեցին խոսել տարբեր լեզուներով և միմյանց չէին հասկանում: Շինարարությունը ձախողվեց: Աշտարակը մնաց անավարտ: Նրանցից շատերը հեռացան Բաբելոնից ու սփռվեցին աշխարհի բոլոր կողմերը:

Բաբելոնի աշտարակը

Հայկ և Բել

Հայկական ավանդությունը պատմում է, որ Բելը Բաբելոնում կարողացավ իր իշխանությունը տարածել մարդկանց վրա: Բաբելոնում բնակվող Հաբեթի սերնդից սերված **Հայկը,** որ քաջ հսկա էր, չկամեցավ ենթարկվել նրան: Նա հավաքեց իր ողջ գերդաստանը և եկավ **Արարատի երկիր**: Բելը զայրացավ և Հայկից պահանջեց վերադառնալ Բաբելոն ու ենթարկվել իրեն: Բայց Հայկը խստորեն մերժեց Բելին: Բելը զորք հավաքեց և արշավեց Հայկի դեմ: Իմանալով Բելի հարձակման մասին Հայկը հավաքեց իր քաջ զորքը և շարժվեց նրան ընդառաջ: **Վանա** լճի մոտ նա հանդիպեց թշնամուն: Ճակատամարտից առաջ դիմելով իր զորքին Հայկն ասաց. *«Երբ մենք դուրս կգանք Բելի զորքի դեմ, աշխատենք հարվածել այնտեղ, որտեղ կանգնած կլինի նա: Կամ մենք կմեռնենք, և մեր տոհմը կդառնա Բելի ծառա, կամ կհաղթենք նրան, և նրա զորքը կփախչի»:* Սկսվեց ահեղ կռիվ: Երկու կողմից էլ շատ քաջեր զոհվեցին, բայց կռվի վերջը չէր երևում: Հսկաներով շրջապատված Բելը փորձեց թաքնվել զինվորների մեջ, մինչև Բաբելոնից օգնության եկող զորքերը հասնեն: Հայկը զգաց նրա մտադրությունը: Նա արագ առաջ անցավ,

մոտեցավ Բելին, ձգեց իր **լայնալիճ*** աղեղը և խոցեց գոռոզ թշնամուն: Հսկա Բելն ընկավ գետին և շունչը փչեց: Այս տեսնելով Բելի զինվորները փախուստի դիմեցին: Հաղթելով թշնամուն մեր քաջ նախնի Հայկը պաշտպանեց իր և իր տոհմի ազատությունն ու պատիվը: **Այդ օրվանից Հայկ Նահապետի անունով մեր երկիրը կոչվեց Հայք, այսինքն՝ Հայաստան**:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Որտե՞ղ բնակվեցին Նոյի թոռները:
2. Ինչո՞ւ էին մարդիկ ուզում աշտարակ կառուցել:
3. Ինչո՞ւ և ինչպե՞ս կանխեց Աստված աշտարակի կառուցումը:
4. Ո՞վ էր Բելը: Նկարագրե՛ք Բելին:
5. Ո՞վ էր Հայկը: Նկարագրե՛ք Հայկին:
6. Ո՞ւր տեղափոխվեց Հայկը:
7. Որտե՞ղ տեղի ունեցավ Հայկի և Բելի ճակատամարտը:
8. Ինչպե՞ս այն ավարտվեց:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Հայկը չցանկացավ ենթարկվել Բելին: Ինչո՞ւ:
2. Աստված նոր ջրհեղեղով չպատժեց մարդկանց: Ինչո՞ւ:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Ձեր կարծիքով՝ արդյո՞ք ճիշտ էին վարվում մարդիկ աշտարակ կառուցելով:
2. Հայկի ու նրա սերունդների համար ի՞նչ նշանակություն ունեցավ Բելի դեմ տարած հաղթանակը:
3. Կուզեի՞ք նմանվել Հայկ Նահապետին: Ինչո՞ւ:

Հարստացնենք մեր բառապաշարը

Բաբելոնյան աշտարակաշինություն, լեզուների բաժանում, Միջագետք, լայնալիճ:

Բառարան

Լայնալիճ – մեծ աղեղ:
Միջագետք – Տիգրիս և Եփրատ գետերի միջև գտնվող տարածքը:
Բաբելոն – հնագույն քաղաք Միջագետքում:

Լրացուցիչ նյութ

ՀՄՈՒՏ ՆԵՏԱԶԻԳԸ

Իմանալով Բաբելոնից հեռանալու Հայկի որոշման մասին՝ Բելը դիմեց խորամանկության: Նա առաջարկեց Հայկին մրցել իր հետ: «Ով մեկ ասպարեզ [180 մետր] տարածությունից նետ ու աղեղով կարողանա խոցել տախտակին ամրացված մատանու շրջանակից ներս, նա է հաղթողը»: Եթե հաղթի ինքը, ապա Հայկը պետք է մնա Բաբելոնում և հնազանդվի իրեն:

Բաբելոնից ոչ հեռու մի մեծ ու հարթ դաշտ կար: Հեռվում մի տախտակ դրեցին, վրան՝ Բելի մատանին:

– Սկսի՛ր, ո՛վ Հայկ, - ասաց Բելը քմծիծաղով, երբ ամբոխի աղաղակների ներքո հսկաներն ասպարեզ մտան:- Առաջին հարվածի իրավունքը կրտսերինն է:

– Ո՛չ,-ասաց Հայկը՝ զայրացած նրա քմծիծաղից, - մեր երկրում միշտ էլ եղել է ու կլինի հարգանքը ավագի նկատմամբ: Տիտանյա՛ն Բել, առաջին հարվածի իրավունքը քեզ է պատկանում:

Եվ եկավ կանգնեց գոռոզ Բելը ուղիղ նշանակետի դիմաց ու ձգեց իր հսկա աղեղը: Նետը սուրաց և մխրճվեց մատանու մեջ՝ առանց վնասելու այն: Ամբոխը զարմանքի ու ցնծության մեջ էր:

– Քո հերթն է, Հա՛յկ,-ասաց Բելը՝ հաջողությունից ոգևորված, - քե՛զ տեսնենք:

Առաջ եկավ Հայկը՝ բարձրահասակ ու թիկնեղ, կանգնեց դաշտի մեջ և լարեց լայնալիճ աղեղը: Նորից սուրաց նետը: Լսվեցին զարմանքի բացականչություններ: Հայկի նետի սլաքը կպել էր Բելի նետին, մեջտեղից երկու կես արել ու մնացել նրա մեջ: Այսպես Հայկ Նահապետը նետաձգությամբ հաղթեց Բելին և իր գերդաստանով հեռացավ Բաբելոնից:

6.Աբրահամ նահապետ: Իսահակ եվ Հակոբ

Աբրահամ

Մենք արդեն գիտենք, որ Նոյն ուներ երեք որդի՝ **Սեմը, Քամը** և **Հաբեթը**: Նոյի երեք որդիներից սերվեցին աշխարհի բոլոր ժողովուրդները: Սեմի հաջորդներից **Աբրահամը** իր կնոջ՝ **Սառայի** և եղբայրների հետ ապրում էր Միջագետքում: Նա առաքինի ու **բարեպաշտ*** մարդ էր: Շատ էր սիրում Աստծուն, հնազանդ ու նվիրված էր նրան: Եվ Աստված որոշեց այդ բարի մարդուն դարձնել մի նոր ցեղի նախահայր: Որոշ ժամանակ անց Աբրահամը Աստծու պատվերով հավաքեց իր գերդաստանը և գնաց մի ուրիշ երկիր՝ **Քանան***: Այստեղ նրանք ապրում էին վրաններում քոչվորական կյանքով: Ջուր և արոտներ գտնելու նպատակով նրանք հաճախ էին տեղափոխվում մի վայրից մյուսը: Անցան շատ տարիներ: Աբրահամը և Սառան ծերացան: Բայց ծեր ամուսինները դեռ ժառանգ չունեին, և այդ պատճառով նրանք խիստ դժբախտ էին:

Աբրահամը

Տեսնելով նրանց տխրությունը՝ Աստված նրանց որդի պարգևեց: Աբրահամը որդուն **Իսահակ** անվանեց: Նա շնորհակալ էր Աստծուց, որ իր տոհմը շարունակվելու էր: Երբ Իսահակը մեծացավ և հասուն մարդ դարձավ, Աբրահամն իր ողջ ունեցվածքը նրան տվեց:

Իսահակ և Հակոբ

Իսահակն ամուսնացավ և ունեցավ երկու որդի՝ **Եսավ** ու **Հակոբ**: Եղբայրները մեծացան: Հայրը շատ էր սիրում Եսավին, իսկ մայրը, ընդհակառակը, Հակոբին, որը սաստիկ ցանկանում էր հոր մահից հետո դառնալ ընտանիքի ղեկավարը: Բայց, ընդունված կարգի համաձայն, այդ իրավունքը պատկանում էր առաջնեկին՝ Եսավին: Հակոբը դիմեց խորամանկության: Մի անգամ, երբ Եսավը դաշտից քաղցած տուն եկավ, Հակոբն իր ապուրը տվեց նրան և որպես վարձատրություն՝ եղբորից պահանջեց **ավագության** իրավունքը: Եսավը համաձայնվեց: Անցան տարիներ: Իսահակը, որ արդեն կորցրել էր տեսողությունը, որոշեց օրհնել իր ավագ որդուն՝ Եսավին: Սակայն եղբորից թաքուն հոր մոտ գնաց Հակոբը: Իսահակը չճանաչեց Հակոբին և օրհնեց նրան որպես իր ավագ որդու: Իմանալով այդ մասին՝ Եսավը խիստ զայրա-

Հրեշտակը Աբրահամին հայտնում է, որ նա որդի է ունենալու

ցավ և որոշեց վրեժխնդիր լինել եղբորից: Մոր խորհրդով Հակոբը փախավ Միջագետք և ապրեց քեռու տանը: Այստեղ նա ամուսնացավ, ընտանիք կազմեց և ունեցավ տասներկու տղա ու մեկ աղջիկ:

Մի քանի տարի անց Հակոբը որոշեց տուն վերադառնալ: Ճանապարհին նա Աստծու կողմից ստանում է **Իսրայել** անունը: Հակոբը ընտանիքով հասավ հայրական տուն: Եսավը ընդունեց եղբորը և ներեց նրան: Հակոբի 12 որդիներից առաջացան հրեական 12 ցեղերը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞վ էր Աբրահամը:
2. Ո՞րտեղ էր ապրում Աբրահամի ընտանիքը:
3. Ո՞ւր գնաց բնակվելու Աբրահամը:
4. Ո՞վ էր Իսահակը:
5. Ո՞ւր փախավ Հակոբը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Նկարագրի՛ր Աբրահամին:
2. Ինչպե՞ս Հակոբը դարձավ տան գլխավորը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Քանան, բարեպաշտ:

Բառարան

Քանան – երկիր. գտնվել է Միջերկրական ծովի արևելյան ափին: Ըստ ավանդության՝ այն Քանան է կոչվել Նոյի թոռան՝ Քանանի անունով:
Բարեպաշտ – բարի, ազնիվ, բարի գործեր կատարող մարդ:

7. Հովսեփ

Հովսեփ

Հակոբը վերադարձավ հայրական տուն, և նրա զավակներն ապրեցին ու մեծացան այնտեղ: Հակոբն իր 12 որդիներից ամենից շատ սիրում էր **Հովսեփին**, և մի օր նրան գեղեցիկ **պատմուճան նվիրեց***: Այս պատճառով եղբայրները նախանձեցին Հովսեփին: Նրանք հովիվներ էին և հաճախ էին անասունները տանում հեռավոր արոտավայրեր ու օրերով բացակայում էին տնից: Մի անգամ, երբ Հովսեփը հաց տարավ եղբայրներին, նրանք խլեցին Հովսեփի պատմուճանը, իսկ իրեն նետեցին մի հորի մեջ: Քիչ անց, տեսնելով առևտրականների մի քարավան, եղբայրները հորից հանեցին Հովսեփին և 20 արծաթե դրամով վաճառեցին **Եգիպտոս*** մեկնող վաճառականներին: Կատարվածն իրենց հորից թաքցնելու համար նրանք Հովսեփի զգեստը թաթախեցին ուլի արյան մեջ և ուղարկեցին նրան: Հայրը հավատաց, թե որդուն հոշոտել են գազանները, և սգաց նրա կորուստը:

Եղբայրները վաճառում են Հովսեփին

Հովսեփը Եգիպտոսում

Երկար տարիներ Հովսեփը Եգիպտոսում ապրում էր չարքաշ ու ծանր կյանքով: Իր ընդունակության շնորհիվ նա դարձավ այդ երկրի կառավարիչը, Եգիպտոսի փարավոնի (թագավորի) ամենավստահելի մարդը: Նա ամուսնացավ եգիպտուհու հետ և ունեցավ երկու որդի: Այդ տարիներին Եգիպտոսում և հարևան երկրներում սով սկսվեց: Բայց եգիպտացիները սովահար չեղան, որովհետև Հովսեփի նախաձեռնությամբ երկրում կուտակվել էին ցորենի պաշարներ: Սովից փրկվելու համար տարբեր երկրներից Եգիպտոս էին գալիս բազմաթիվ մարդիկ: Ցորեն գնելու նպատակով Եգիպտոս գնացին նաև Հովսեփի եղբայրները: Նրանք ներկայացան Հովսեփին և հայտնեցին իրենց գալու նպատակը: Հովսեփը իսկույն ճանաչեց եղբայրներին և մեծ օգնություն ցույց տվեց նրանց: Երբ եղբայրները երկրորդ անգամ եկան Եգիպտոս, Հովսեփն այլևս չկարողացավ զսպել կարոտը և հայտնեց նրանց իր ով լինելը: Եղբայրները ուրախացան և գրկախառնվեցին նրա հետ: Հովսեփը ներեց եղբայրներին և հաշտվեց նրանց հետ: Այս հանդիպումից հետո,

Եգիպտական որմնանկար

փարավոնի հրավերով, Հովսեփի հայրը և եղբայրներն իրենց ընտանիքներով տեղափոխվեցին Եգիպտոս: Այստեղ նրանք բազմացան, ապրեցին երկար տարիներ և կոչվեցին **իսրայելացիներ,** այսինքն՝ Իսրայելի որդիներ:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞վ էր Հովսեփը:
2. Ինչո՞ւ եղբայրները նախանձեցին Հովսեփին և ի՞նչ արեցին:
3. Ինչո՞վ էին զբաղվում Հովսեփի եղբայրները:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Ինչո՞ւ եղբայրները որոշեցին պատժել Հովսեփին:
2. Ի՞նչ իմացաք Եգիպտոսի մասին:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Ձեր կարծիքով՝ կարելի՞ է նախանձել եղբորը:
2. Ձեր կարծիքով՝ ճի՞շտ վարվեց Հովսեփը՝ ներելով եղբայրներին: Դուք ինչպե՞ս կվարվեիք նրա փոխարեն: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Փարավոն, քարավան, իսրայելացիներ:

Բառարան

Պատմուճան նվիրել – թիկնոց նվիրել: Հնում ընդունված սովորության համաձայն՝ այն նվիրում էին նրան, ով պետք է դառնար հայրական տան ավագը և ժառանգորդը:
Եգիպտոս – երկիր. գտնվում է Հյուսիսարևելյան Աֆրիկայում:

8. Մովսես Մարգարե

Իսրայելացիները Եգիպտոսում

Մովսես

Հետագայում Եգիպտոսի իշխանավորների վերաբերմունքը փոխվեց իսրայելացիների նկատմամբ: Փարավոնին անհանգստացնում էր նրանց հարստանալն ու բազմանալը, ինչը կարող էր վտանգավոր լինել երկրի համար: Այդ պատճառով նա հրամայեց իսրայելացիներին կատարել շինարարական ծանր, տաժանակիր աշխատանքներ՝ կառուցել ջրանցքներ, տներ ու քաղաքներ: Չբավարարվելով այդքանով՝ փարավոնը կարգադրեց իսրայելացիների ընտանիքների նորածին տղա երեխաներին գետը նետել:

Մովսեսը իր ժողովրդի առաջնորդ

Իր նորածին տղային փրկելու համար իսրայելացի մի կին նրան դնում է զամբյուղի մեջ և թաքցնում Նեղոսի ափին: Փարավոնի դուստրը եղեգների մեջ գտնում է զամբյուղի մեջ լացող երեխային: Արքայադուստրը խղճում է երեխային և բերում պալատ: Նա որդեգրում է տղային ու անվանում **Մովսես**, որ նշանակում է **ջրից փրկված**: Երբ Մովսեսը չափահաս է դառնում, նա ականատես է լինում իր ազգակիցների ծանր կյանքին: Նա ըմբոստանում է փարավոնի դեմ և հեռանում Եգիպտոսից: Որոշ ժամանակ անց փարավոնի մահվանից հետո, Աստծու պատվերով, Մովսեսը վերադառնում է Եգիպտոս, որպեսզի իսրայելացիներին ազատի գերությունից: Մովսեսի առաջնորդությամբ նրանք դուրս են գալիս Եգիպտոսից և ուղևորվում են Քանանի երկիր: Փարավոնը հրամայում է վերադարձնել իսրայելացիներին, որովհետև երկիրը զրկվում էր ծառաներից ու ստրուկներից: Հավաքելով զորքը՝ փարավոնը հետապնդում է իսրայելացիներին և նրանց հասնում **Կարմիր ծովի*** ափին: Աստծու կամքով ծովի ջրերը բաժանվում են, և բացվում է ճանապարհը: Իսրայելացիները անցնում են ծովի մյուս ափը: Եգիպտական բանակը հետևում է նրանց: Բայց ջրերը կրկին բարձրանում են, և փարավոնի ողջ զորքը խեղդվում է ծովում:

Մերձավոր և Միջին Արևելք

Աստծու պատվիրանները

Շարունակելով ճանապարհը՝ իսրայելացիները, մեծ զրկանքներ կրելով, հասան **Սինայի** անապատը: Այստեղ նրանք կանգ առան և բնակվեցին անապատում վեր խոյացող Սինա լեռան դիմաց: Մովսեսը բարձրացավ այդ լեռը: Սինայի գագաթին **Աստված երևաց նրան և հայտնեց իր տասը պատվիրանները**, որոնք նա գրեց քարե սալերի վրա: Աստված պատվիրում էր **հարգել ծնողներին**, **մարդ չսպանել**, **գողություն չանել**, **սուտ չխոսել**, **սիրել հարազատներին** և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչո՞ւ փոխվեց փարավոնի վերաբերմունքը իսրայելացիների նկատմամբ:
2. Ի՞նչ աշխատանքներ էին կատարում իսրայելացիները:
3. Ինչպե՞ս փրկվեց Մովսեսը:
4. Ինչո՞ւ իսրայելացիները դուրս եկան Եգիպտոսից:
5. Որտե՞ղ բնակվեցին նրանք:
6. Երբ Աստված երևաց Մովսեսին, ի՞նչ պատվիրաններ տվեց:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

Ինչպե՞ս եք հասկանում Աստծու պատվիրանները:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

Կուզեի՞ք նմանվել Մովսեսին: Դուք կարո՞ղ եք լինել ձեր ժողովրդի առաջնորդը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ականատես, տաժանակիր:

Բառարան

Կարմիր ծով – ծով Աֆրիկայի և Արաբական թերակղզու միջև:

Լուսնոտիզ այուր

Հովհաննես Թումանյան

ԸՆՏՐՅԱԼԸ

Հոգու սրբազան կրակով վառված
Իջնում էր Մովսես լեռան գագաթից,
Իջնում էր ահեղ պատգամներն առած
Շղթայից հանող Աստծու մոտից:

Ու տեսավ Մովսես լեռան բարձունքից,
Ժողովուրդն էնտեղ ներքևում, հովտում,
Աստված է շինել ոսկուց, արծաթից,
Պարում է շուրջը ու հարբած գոռում.

«Ինչո՞ւ մեզ բերավ Մովսես անապատ,
Լի Եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ ...
Ո՞ւր է մեր սխտորն ու սոխը առատ ...
Էնտեղ հանգիստ էր ու լիքն էր էնպե՜ս ...»:
«Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, Տե՜ր...

Ինչո՞ւ են, Աստվա՛ծ, քո վեհ պատգամներ,
Իմ տանջանքն ինչո՞ւ...»,– գոչեց զայրացած,
Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ
Ժայռերի գլխից թողեց դեպի ցած ...

Բայց... մյուս առավոտ, երբ որ դեռ քնած,
Հանգչում էր ամբոխն աղմուկից հոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա
Դարձյալ միայնակ վե՜ր՝ դեպի Սինա:

Սինա լեռը

9. ԴԱՎԻԹ ԹԱԳԱՎՈՐ

Սավուղ և Դավիթ

Դավիթ

Մովսեսի առաջնորդությամբ իսրայելացիները 40 տարի դեգերում էին անապատում: Այդ ընթացքում վախճանվում է Մովսեսը: Նրա մահից հետո իսրայելացիներին հաջողվում է գրավել իրենց նախնիների երկիրը՝ Քանանը, և բնակվել այնտեղ: Նրանց առաջին թագավորն է դառնում **Սավուղը:**

Սակայն Սավուղը հաճախ չէր կատարում Աստծու պատվիրանները և այդ պատճառով էլ զրկվեց գահը **ժառանգաբար փոխանցելու իրավունքից*:** Սավուղը շատ տխրեց: Նա հրամայեց գտնել և արքունիք բերել տավիղ նվագող մի երաժշտի: Ծառաները պալատ բերեցին **Դավիթ** անունով խարտյաշ մազերով շնորհալի մի պատանու: Նա անվախ հովիվ էր, գիտեր տավիղ նվագել և երգեր հորինել:

Տավիղ. Դավիթը նվագել է նմանօրինակ գործիքի վրա:

Սավուղը հավանեց Դավթին: Դավիթը մնաց պալատում՝ դառնալով արքայի պալատական երաժիշտը: Անցավ որոշ ժամանակ: Մի անգամ՝ թշնամիների դեմ կռվում, Դավիթը հաղթեց նրանց հսկային: Դրանից հետո Դավթի համբավը տարածվեց ողջ երկրում: Բոլորը սիրում ու փառաբանում էին նրան: Սավուղը նախանձեց Դավթին և որոշեց սպանել նրան: Արքայազնը՝ Դավթի մտերիմ ընկերը, զգուշացնում է նրան: Դավիթը փախչում է և թաքնվում թագավորի հետապնդումներից: Կռիվներից մեկի ժամանակ Սավուղը և իր որդին սպանվում են: Դավիթը վերադառնում է Քանան և ընտրվում է թագավոր:

Սասունցի Դավիթ

Դավիթ թագավորը

Թագավոր հռչակվելուց հետո Դավիթը **Երուսաղեմը** դարձրեց երկրի մայրաքաղաքը: Շուտով թշնամիները հարձակվեցին երկրի վրա: Բայց Դավիթը կարողացավ հաղթել նրանց:

Դավիթը որոշում է Աստծուն նվիրված մի տաճար կառուցել: Սակայն նա ծերացել էր և տաճարի կառուցումը հանձնարարեց որդուն՝ **Սողոմոնին:**

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Որքա՞ն դեգերեցին իսրայելացիները անապատում:
2. Ո՞վ էր իսրայելացիների առաջին թագավորը:
3. Ո՞վ էր Դավիթը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

1. Ինչո՞ւ Աստված զայրացավ Սավուղի վրա:
2. Ինչո՞ւ Դավթին բերեցին արքունիք:
3. Ինչո՞ւ Սավուղը նախանձեց Դավթին:
4. Նկարագրե՛ք Դավիթ թագավորին:

Հարստացնենք մեր բառապաշարը

Դեգերել, ժառանգության իրավունք, տաճար:

Բառարան

ժառանգության իրավունք – այստեղ նկատի է առնված գահաժառանգությունը, որի համաձայն՝ գահը փոխանցվում էր ժառանգաբար՝ հորից ավագ որդուն:

ԼՈՒԾՈՒԾԻՉ ԱՅՈՒԹ

ԱՐԴԱՐ ՊԱՏԻԺ

Նաթան մարգարեն Դավիթ թագավորին պատմեց հետևյալ իրական դեպքը:

Ժամանակին մի քաղաքում երկու մարդ էին ապրում, մեկը՝ հարուստ, մյուսը՝ աղքատ: Հարուստը շատ անասուններ ուներ, իսկ աղքատը ոչինչ չուներ, բացի մի ոչխարից: Աղքատը ոչխարին պահում և խնամում էր իր աչքի լույսի պես: Մի օր հարուստ մարդու տանը հյուրընկալվում է մի օտարական: Նրան պատվելու համար հարուստն ափսոսում է մորթել իր բազում ոչխարներից մեկը և մորթում է աղքատի միակ ոչխարը:

Լսելով այս պատմությունը՝ Դավիթը սաստիկ զայրանում է՝ ասելով. «Այդ մարդն արժանի է պատժի, նա խիղճ չունի: Աղքատից վերցրածը պետք է փոխհատուցվի յոթ ոչխարով»:

Այս պատմությունը ցույց է տալիս, որ ագահ մարդը, միևնույն է, վաղ թե ուշ պատժվելու է:

10. Սողոմոն Իմաստուն

Սողոմոնի գահակալումը

Սողոմոն Իմաստուն

Ծերունի Դավիթ թագավորը գահը կտակում է կրտսեր որդուն՝ Սողոմոնին: Մահվանից առաջ նա պատվիրում է որդուն՝ հավատարիմ մնալ Աստծուն, կատարել նրա պատգամները և չմոռանալ տաճարի կառուցման մասին:

Գահ բարձրանալուց հետո Սողոմոնը հաղթում է դավադիր եղբորը և ամրապնդում իր իշխանությունը, այնուհետև ամուսնանում Եգիպտոսի փարավոնի աղջկա հետ: Պետական գործերը հմուտ վարելու, խելացի և արդար կառավարելու համար ժողովուրդը նրան անվանում է **Իմաստուն:**

Սողոմոն Իմաստուն

Սողոմոն Իմաստունի թագավորության տարիներին երկրում տիրում է խաղաղություն: Նա իրականացնում է շինարարական վիթխարի աշխատանքներ: Կատարելով հոր կամքը՝ Սողոմոն Իմաստունը կառուցում է Երուսաղեմի հրաշակերտ տաճարը: Այնուհետև կառուցվում են Երուսաղեմի պարիսպները և աշտարակները, վերականգնվում են հին քաղաքները, հիմնվում նորերը:

Նրա օրոք երկիրը բարգավաճում է, մարդկանց կյանքը դառնում ապահով ու բարեկեցիկ: Սողոմոն Իմաստունի համբավը դուրս է գալիս երկրի սահմաններից ու տարածվում հեռավոր երկրներում: Շատ թագավորներ ու նշանավոր մարդիկ ցանկանում էին անձամբ տեսնել Սողոմոնին, լսել նրա իմաստուն խոսքերն ու խրատները:

Սողոմոն Իմաստունը նաև կրթված և գիտուն մարդ էր: Նա գրել է բազմաթիվ առակներ, օրհներգեր*:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞վ էր Սողոմոն Իմաստունը:
2. Ի՞նչ էր պատվիրել նրան հայրը:
3. Ի՞նչ շինարարական աշխատանքներ կատարեց Սողոմոն Իմաստունը:
4. Ի՞նչ է գրել Սողոմոն Իմաստունը:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

Ինչո՞ւ ժողովուրդը Սողոմոնին տվեց Իմաստուն պատվանունը:

գ) Եկեք քննարկենք ու բանավիճենք:

1. Բնութագրե՛ք Սողոմոն Իմաստունին: Նրա մեջ ի՞նչը ամենից շատ դուր եկավ ձեզ և ինչո՞ւ:
2. Ձեր կարծիքով՝ ո՞ւմ կարելի է համարել իմաստուն:

Հարստացնենք մեր բառապաշարը

Իմաստուն, օրհներգ, առակ:

Բառարան

Օրհներգ – օրհնության երգ, գովաբանության երգ, բանաստեղծություն:



ԼՈՒԾՈՒԾԻՉ ԱՅՈՒԹ

ԱՐԴԱՐ ՎՃԻՌ

Մի օր Սողոմոն թագավորի մոտ եկան իրար հետ վիճող երկու կին: Նրանցից մեկն ասաց թագավորին.

- Տե՛ր արքա, ես և այս կինը ապրում էինք միևնույն տանը: Ես ունեցա մի տղա երեխա, երեք օր անց նա էլ տղա երեխա ունեցավ: Մենք միասին էինք, և որևէ օտար մեկը մեզ հետ չկար տանը: Գիշերը այս կնոջ որդին մահացավ: Ես քնած էի, նա վերցրեց իմ որդուն և իր մեռած երեխային թողեց ինձ: Առավոտյան ես արթնացա, որպեսզի կերակրեմ իմ որդուն, սակայն մահճակալում երեխան մեռած էր: Ուշադիր նայելով նրան՝ ես նկատեցի, որ նա իմ որդին չէ:

Մյուս կինը միջամտեց՝ ասելով.

- Ընդհակառակը, ապրող երեխան իմն է, և այդ քո որդին էր մեռած:

Բայց առաջին կինը պնդում էր.

- Ո՛չ, այդ քո որդին էր մեռած, իսկ իմը ողջ և առողջ է:

Վեճը բորբոքվում էր: Ինչպե՞ս իմանալ, թե այդ երկու կանանցից ո՞րն էր ասում ճշմարտությունը:

Սողոմոն թագավորն իր իմաստության շնորհիվ գտավ ելքը: Նա ասաց.

- Բերե՛ք մի սուր և երկու կես արե՛ք երեխային ու մի կեսը տվե՛ք այս կնոջը, մյուս կեսը՝ մյուս կնոջը:

Այդ ժամանակ կանանցից մեկը ծնկի իջավ և աղերսեց արքային:

- Ավելի լավ է երեխային տաք մյուս կնոջը, քան թե սպանեք:

Մյուս կինն ասաց.

- Սպանե՛ք երեխային, թող ոչ իմը լինի և ոչ նրանը:

Լսելով կանանց խոսքերը՝ Սողոմոն Իմաստունը հրամայեց.

- Երեխան տվեք առաջին կնոջը, նա է երեխայի մայրը:

Այսպես Սողոմոն Իմաստունը պարզեց ճշմարտությունը: Հարազատ մայրը պատրաստ է անգամ իր երեխային ուրիշին տալ, միայն թե նա ողջ մնա:

Սողոմոն Իմաստունի կողմից կառուցված Երուսաղեմի տաճարի մուտքը

11. ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

Իսրայելի և Հուդայի թագավորությունները

Սողոմոնի մահվանից հետո իսրայելացիների պետությունը բաժանվում է երկու մասի՝ **Իսրայելի** և **Հուդայի:**

Իսրայելում գահակալում է Սողոմոնի մերձավորներից մեկը, իսկ Հուդայում՝ նրա որդին: Հետագայում շատ թագավորներ են հաջորդում միմյանց, բայց այս պետություններն այլևս չեն միավորվում: Հուդայի թագավոր **Եզեկիան** հաղթում է ասորեստանցիներին, ոչնչացնում երկրում տարածված կուռքերի **պաշտամունքը*** և վերականգնում մարդկանց հավատը Աստծու նկատմամբ:

Ասորեստանցի զինվոր

Բաբելոնյան գերություն

Իսրայելը, չկարողանալով դիմագրավել **Ասորեստանի** գրոհներին, ի վերջո ընկնում է նրա տիրապետության տակ:

Քրիստոսից առաջ* VI դարում Հուդան նույնպես հայտնվում է ծանր վիճակում: Բաբելոնի թագավորը գրավում է Հուդայի մայրաքաղաք Երուսաղեմը: Թշնամին քանդում է Երուսաղեմի պարիսպները, ավերում ու թալանում **Աստծու տաճարը** և արքայական պալատը: Բնակչության մեծ մասը գերեվարվում է Բաբելոն: Այստեղ նրանք շատ զրկանքներ են կրում: Որոշ ժամանակ անց պարսից արքա **Կյուրոս Մեծը** գրավում է Բաբելոնը: Նա իսրայելացիներին թույլ է տալիս վերադառնալ իրենց երկիրը և վերականգնել Աստծու տաճարը:



Բաբելոն քաղաքի դարպասները

Հետագա դարերի ընթացքում իսրայելացիներին այդպես էլ չհաջողվեց վերականգնել իրենց թագավորությունը, քանի որ նրանք անմիաբան էին և հեռացել էին Աստծու պատվիրաններից:

Ք. ա. I դարում նրանք հայտնվեցին հռոմեական պետության կազմում: Այդ ժամանակների մասին **Հին կտակարանում** գրված է, որ չնայած դժվարություններին՝ իսրայելացիները չէին հուսահատվել և հիշում էին մարգարեների կանխատեսումները **Փրկչի գալստյան** մասին: Փրկիչը պետք է գար և նրանց ազատեր օտար տիրապետությունից ու վերականգներ իրենց թագավորությունը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ եղավ Սողոմոն Իմաստունի մահվանից հետո:
2. Հուդայի թագավորներից ո՞վ դարձավ նշանավոր և ինչո՞վ:
3. Ովքե՞ր գերեվարեցին իսրայելացիներին:
4. Ո՞վ ազատեց իսրայելացիներին Բաբելոնյան գերությունից:

բ) Եկեք հասկանանք ու բացատրենք:

Ինչպե՞ս հասկացան հրեաները Փրկչի գալստյան մասին գաղափարը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Բաբելոնյան գերություն, Փրկիչ, պաշտամունք:

Բառարան

Պաշտամունք – հարգանք, մեծարանք, հավատ, սեր:
Քրիստոսից առաջ – մեր թվարկությունից առաջ, այսինքն՝ մինչև Քրիստոսի ծնունդը: Գործածական է նաև կարճ ձևը՝ Ք.ա.:

12. Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը

Մարիամ Աստվածածին

Մարիամի նշանադրությունը

Նազարեթ փոքրիկ քաղաքում ապրում էին արդար ու բարեպաշտ ամուսիններ Հովակիմն ու Աննան: Հովակիմը մեծահարուստ մարդ էր Դավիթ թագավորի տոհմից, իսկ Աննան համեստ ու ազնիվ մի կին էր: Նրանք երկար տարիներ երեխա չէին ունենում: Երբ արդեն տարիքով բավականին մեծ էին, Աստված նրանց աղջիկ երեխա պարգևեց, որին անվանեցին **Մարիամ**:

Հովակիմն ու Աննան որոշեցին իրենց դստերը **ընծայել* տաճարին:** Երբ Մարիամը դարձավ երեք տարեկան, ծնողները նվերներով և հանդիսավորությամբ նրան տաճար տարան՝ այնտեղ կրթվելու և տաճարին ծառայելու համար:

Փոքրիկ աղջիկը Աստծու տաճարում մեծանում էր ինչպես մի անբիծ աղավնի: Նա թել էր մանում և ասեղնագործում:

Մարիամը խելացի էր, բարի, խոնարհ և օրվա մեծ մասը նվիրում էր աղոթքին ու ընթերցանությանը:

Մարիամի ծնողները շուտ մահացան: Երբ նա մեծացավ, նրան նշանեցին Նազարեթում ապրող Հովսեփ անունով մի **հյուսնի*** հետ:

Հրեշտակի ավետիսը

*Հրեշտակի ավետիսը**

Մի օր Մարիամը տաճարի համար վարագույր գործելու թել էր մանում: Հանկարծ հայտնվեց Աստծու ուղարկած Գաբրիել հրեշտակը և հայտնեց, որ Մարիամը պետք է որդի ունենա և նրա անունը պետք է **Հիսուս*** դնի: Նա կլինի **սուրբ ու ամենազոր և ողջ մարդկությանը կփրկի մեղքերից***: Այսինքն՝ նա էր լինելու այն Փրկիչը, որի մասին Հին կտակարանում կանխատեսել էին մարգարեները:

Սկզբում Մարիամը վախեցավ, հետո զարմացավ հրեշտակի ասածներից, որովհետև նա նշանված էր և դեռ ամուսնացած չէր: Սակայն հրեշտակը բացատրեց, որ Հիսուսը սովորական երեխա չի լինի, նա կծնվի **Սուրբ Հոգուց** և **Աստծու որդի** կկոչվի, իսկ Աստծու համար անկարելի ոչինչ չկա:

Գաբրիել հրեշտակը երևաց նաև Մարիամի նշանածին՝ Հովսեփին: Հրեշտակը նրան պատվիրեց կնության առնել Մարիամին: Բարի և արդար Հովսեփը կատարեց այնպես, ինչպես հրեշտակն էր պատվիրել:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ովքե՞ր էին Հովակիմն ու Աննան:
2. Ինչո՞ւ փոքրիկ Մարիամին ընծայեցին տաճարին:
3. Փորձիր նկարագրել, թե ինչպես էր տաճարում անցկացնում իր օրերը դեռատի Մարիամը:
4. Ո՞ւմ հետ նշանեցին Մարիամին:
5. Ի՞նչ հայտնեց հրեշտակը Մարիամին:
6. Ի՞նչ պատվիրեց հրեշտակը Հովսեփին:

բ) Եկեք քննարկենք և բանավիճենք:

Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Աստված ընտրեց Մարիամին:

գ) Ամբողջացրո՛ւ հետևյալ նախադասությունները:

1. Մարիամի ծնողներն էին ...
2. Հրեշտակը Մարիամին ասաց, որ որդու անունը ...

դ) Տանը թղթի վրա նկարի՛ր հրեշտակ:

ե) Փորձե՛ք նկարագրել ձեր մայրիկին և Մարիամ Աստվածածնին: Համեմատե՛ք այդ նկարագրությունները:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ավետիս, խոնարհ, անբիծ, հյուսն:

Բառարան

Հիսուս – թարգմանաբար նշանակում է փրկիչ:
Ավետել – բարի լուր հայտնել:
Հյուսն – փայտագործ վարպետ, փայտե իրեր, առարկաներ պատրաստող:
Ընծա – նվեր:
Մեղք – անթույլատրելի արարք, հանցանք:

13. Հիսուս Քրիստոսի ծնունդը

Մարդահամարը

Մեզանից մոտ երկու հազար տարի առաջ Հռոմի Օգոստոս կայսրը որոշեց **մարդահամար*** անցկացնել: Յուրաքանչյուր բնակիչ պարտավոր էր գնալ իր ծննդավայրը:

Ծնունդ

Հովսեփն ու Մարիամը նույնպես պետք է մասնակցեին մարդահամարին: Այդ նպատակով նրանք մեկնեցին Հովսեփի ծննդավայրը՝ Բեթղեհեմ*: Այդ քաղաքը շատ հեռու էր Նազարեթից: Նրանք ստիպված էին երկար ճանապարհ անցնել: Երբ Բեթղեհեմ հասան, նրանք իջևանատներում* գիշերելու տեղ չգտան, որովհետև բոլոր սենյակները զբաղված էին: Նրանք ստիպված իջևանեցին մի քարայրում: Նույն գիշերը Մարիամը որդի ունեցավ: Երեխային բարուրեցին, և քանի որ օրորոց չկար, նրան տեղավորեցին **մսուրի*** մեջ: Մանկանն անվանեցին Հիսուս, ինչպես պատվիրել էր հրեշտակը:

Հովիվների այցը

Բեթղեհեմի շուրջը տարածված էին կանաչ մարգագետիններ, ուր հովիվները արածեցնում էին իրենց ոչխարներին: **Հիսուս Քրիստոսի*** ծննդյան գիշերը նրանք երկնքում վառ լույս տեսան: Հանկարծ հայտնվեց հրեշտակը և ասաց, որ մեծ ուրախություն է հայտնելու նրանց, քանի որ Բեթղեհեմ քաղաքում ծնվել է **Աստծու որդին**, որը աշխարհ է եկել մարդկանց փրկելու համար:

Հովիվները գնացին և քարայրում գտան Մարիամին, Հովսեփին և մսուրի մեջ դրված նորածին Հիսուսին: Հովիվները մոտեցան, խոնարհվեցին և պատմեցին հրեշտակի ավետիսի մասին:

Աստված Հիսուս Քրիստոսի ծննդյան համար ոչ թե շքեղ պալատ, այլ հասարակ տեղ ընտրեց: Նա առաջինը հասարակ մարդկանց՝ հովիվներին հայտնեց մանկան ծննդյան մասին:

Տիրամայրը մանկան հետ

Հովիվների երկրպագությունը

Մոգերի երկրպագությունը

Հիսուս Քրիստոսի ծնվելուց հետո երկնքում մի մեծ, փայլատակող աստղ հայտնվեց, որի նմանը մարդիկ չէին տեսել:

Բեթղեհեմից շատ հեռու՝ արևելքում, բնակվում էին հարուստ և իմաստուն երեք մարդ, որոնք կոչվում էին **մոգեր***: Երբ նրանք նկատեցին նորահայտ աստղը, հասկացան, որ ծնվել է մարգարեների կանխատեսած փրկիչը: Նրանք ցանկացան այցի գնալ, բայց չգիտեին, թե որտեղ է նա: Եվ ահա այդ հրաշք աստղը մոգերին առաջնորդեց այն տեղը, որտեղ ծնվել էր Հիսուս Քրիստոսը: Տեղ հասնելով՝ նրանք գտան Մարիամին՝ մանուկ Հիսուսին գրկած: Ծնկի իջնելով՝ մոգերը թանկարժեք նվերներ մատուցեցին մանկանը և վերադարձան իրենց երկրները:

Փախուստ դեպի Եգիպտոս

Այն երկրում, որտեղ ծնվեց Հիսուս Քրիստոսը, իշխում էր **Հերովդես** անունով մի թագավոր: Մինչև Բեթղեհեմ հասնելը մոգերը հյուրընկալվեցին այդ թագավորի մոտ: Երբ նա լսեց, որ Բեթղեհեմում ծնվել է Փրկիչը, որին թագավոր են անվանում, կարծեց, թե նա պետք է իր փոխարեն թագավորի: Եվ Հերովդեսը որոշեց սպանել մանուկ Հիսուսին: Նա մոգերին ասաց, որ երբ մանկանը գտնեն, իրեն ևս տեղեկացնեն, որ ինքն էլ այցելի նրան: Սակայն Հերովդեսը ստում էր. նա այս ձևով ուզում էր գտնել ու սպանել մանուկ Հիսուսին:

Գիշերը հրեշտակը երևաց մոգերին, զգուշացրեց նրանց՝ իրենց երկրները վերադառնալ այլ ճանապարհով և չհայտնել մանուկ Հիսուսի գտնվելու վայրը: Նույն հրեշտակը պատվիրեց Հովսեփին, որ նա Մարիամի ու մանուկ Հիսուսի հետ փախչի Եգիպտոս և որոշ ժամանակ այնտեղ բնակվի: Հովսեփը իսկույն վերցրեց մանկանն ու Մարիամին և ճանապարհվեց դեպի Եգիպտոս:

Երբ Հերովդեսը մահացավ, հրեշտակը կրկին հայտնվեց Հովսեփին և պատվիրեց վերադառնալ հայրենիք: Հովսեփը մանուկ Հիսուսի և Մարիամի հետ վերադարձավ Եգիպտոսից և բնակություն հաստատեց Նազարեթ քաղաքում:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչո՞ւ Հովսեփն ու Մարիամը Բեթղեհեմ գնացին:
2. Որտե՞ղ գիշերեցին նրանք:
3. Ովքե՞ր առաջինն իմացան Հիսուսի ծննդյան մասին:
4. Ինչպե՞ս մոգերը տեղեկացան Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին:
5. Ո՞վ էր ուզում սպանել մանուկ Հիսուսին: Ինչո՞ւ:

բ) Գտի՛ր և կարդա՛:

1. Ամենաուրախ տողերը:
2. Ամենահուզիչ տողերը:

գ) Հետևյալ հատվածի համար գտի՛ր հարմար վերնագիր: Քո ընտրած վերնագիրը համեմատի՛ր ընկերոջդ ընտրած վերնագրի հետ:

Երբ Հերովդեսը մահացավ, հրեշտակը կրկին հայտնվեց Հովսեփին և պատվիրեց վերադառնալ հայրենիք: Հովսեփը մանուկ Հիսուսի և Մարիամի հետ վերադարձավ Եգիպտոսից և բնակություն հաստատեց Նազարեթ քաղաքում:

Հարստացնենք մեր բառապաշարը

Իջևանատուն, մսուր, մոգ, նորահայտ, մարդահամար:

Բառարան

Բեթղեհեմ – քաղաք Պաղեստինում:
Մարդահամար – երկրի բնակիչներին հաշվառելու գործողություն:
Իջևանատուն – հյուրանոց, պանդոկ, գիշերելու տեղ:
Մսուր – գոմում այն տեղը, ուր կենդանիների համար խոտ են լցնում:
Քրիստոս – թարգմանաբար նշանակում է օծյալ:
Մոգ – այսպես էին կոչվում հին Արևելքում հմաստուն ու կրթված մարդիկ, որոնք ուսումնասիրում էին տարբեր գիտություններ և հատկապես աստղագիտություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՅՈՒԹ

ԵՂԵՎՆԻՆ

Շատ-շատ տարիներ առաջ, երբ ծնվեց Հիսուս Քրիստոսը, ամբողջ աշխարհը ուրախացավ: Ամեն կողմից մարդիկ եկան՝ տեսնելու մանուկ Հիսուսին, և նրան նվերներ բերեցին:

Հիսուսի տան մոտ երեք ծառեր էին աճում՝ արմավենին, թթենին ու եղևնին: Երբ շոգն ընկավ, արմավենին պարզեց իր լայն տերևները, որ հով անի Հիսուսին: Թթենին իր տերևները տվեց, որ նրա համար փափուկ անկողին պատրաստեն:

- Իմ տերևները փշոտ են: Ես ոչինչ չունեմ մանուկ Հիսուսին տալու,- մտորեց եղևնին ու սկսեց լաց լինել:

Երբ մթնեց, ու երկնքում վառվեցին աստղերը, նրանք որոշեցին օգնել եղևնուն: Աստղերը կամաց-կամաց ներքև իջան, նստեցին եղևնու ճյուղերին, և նա սկսեց փայլել ու շողշողալ: Երբ Հիսուսն արթնացավ ու տեսավ փայլփլող ծառը, շատ ուրախացավ: Եվ դա եղավ ամենագեղեցիկ նվերը Հիսուսին:

Այդ օրից սկսած՝ եղևնին դարձավ Ամանորի ծառ, Սուրբ Ծնունդի ծառ:

Տիրամայրը (Մարիամ Աստվածածին)

14. ՊԱՏԱՆԻՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Հիսուսն ապրում և մեծանում էր Նազարեթ քաղաքում:

Մարիամն ու Հովսեփը, իրենց բազմաթիվ հայրենակիցների նման, ամեն տարի Զատկի տոնին գնում էին Երուսաղեմ: Երբ Հիսուսը դարձավ տասներկու տարեկան, նրան ևս իրենց հետ տարան Երուսաղեմ:

Պատանի Հիսուսը տաճարում

Զատկի տոնակատարությունները շարունակվեցին մեկ շաբաթ: Երբ տոներից հետո բոլորը տուն էին վերադառնում, պատանի Հիսուսը մնաց Երուսաղեմում: Մարիամն ու Հովսեփը, կարծելով, թե նա իրենց բարեկամների հետ առջևից է գնում, հանգիստ ճանապարհվեցին Նազարեթ: Երեկոյան, երբ բոլորը կանգ առան հանգստանալու, ծնողները որոնեցին Հիսուսին, բայց ոչ մի տեղ չգտան: Նրանք չափազանց անհանգստացան և ստիպված վերադարձան Երուսաղեմ: Քաղաքում երկար փնտրելուց հետո վերջապես նրան գտան տաճարում: Հիսուսը նստած էր **վարդապետների*** հետ, լսում էր նրանց և հարցեր տալիս:

Բոլորն ապշել էին տասներկու տարեկան երեխայի տված իմաստուն հարցերի և պատասխանների վրա:

Մարիամը շատ էր զարմացել, որ հնազանդ որդին առանց նախազգուշացնելու մնացել էր տաճարում: Նա մոտ վազեց որդուն և ասաց.

– Զավակս, գիտե՞ս, թե որքան ժամանակ է, որ ես ու հայրդ անհանգըստացած քեզ ենք փնտրում:

Հիսուսը պատասխանեց.

– Ինչո՞ւ էիք ուրիշ տեղ փնտրում: Չգիտեի՞ք, որ ես **Հորս տանը** պետք է լինեմ:

Այսպես պատասխանելով՝ Հիսուսը ցանկանում էր ասել, որ ինքն Աստծու որդին է, իսկ տաճարը իր Հոր տունն է: Սակայն ոչ ոք չհասկացավ այս խոսքերի բուն իմաստը:

Հիսուսը ծնողների հետ վերադարձավ Նազարեթ: Նա շատ աշխատասեր, բարի, համեստ և հնազանդ որդի էր:

Հովսեփը հյուսն էր, և Հիսուսն օգնում էր նրան այդ աշխատանքում:

Պատանի Հիսուսն օգնում է Հովսեփին

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչո՞ւ էին Մարիամն ու Հովսեփը ամեն տարի գնում Երուսաղեմ:
2. Քանի՞ տարեկան էր Հիսուսը, երբ ծնողները նրան տարան Երուսաղեմ:
3. Որտե՞ղ գտան Մարիամն ու Հովսեփը Հիսուսին:
4. Ինչո՞ւ էին ճանաչողները սիրում Հիսուսին:
5. Ի՞նչ արհեստ սովորեց Հիսուսը:

բ) Եկեք քննարկենք և բանավիճենք:

1. Ձեր կարծիքով՝ ի՞նչ էին նշանակում Հիսուսի «... չգիտեի՞ք, որ ես Հորս տանը պետք է լինեմ» խոսքերը:
2. Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պետք է լինի երեխան:

Բառարան

Վարդապետ – Աստծու պատվիրանների գիտակ, ուսուցանող, հոգևոր աստիճան:

Լրացուցիչ նյութ

ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Այն օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»: Եվ նա իր մոտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ»:

(Մատթ. 18. 1-5)

Տիրամայրը մանկան հետ

15.ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Մկրտչի ծնունդը

Զաքարիան Երուսաղեմի տաճարի քահանա էր: Նա և իր կինը՝ Եղիսաբեթը, բավականին ծեր էին, բայց երեխա չունեին: Դա մեծ վիշտ էր նրանց համար:

Մարիամի և Եղիսաբեթի հանդիպումը

Մի օր, երբ Զաքարիան տաճարում **խընկարկում*** էր, հայտնվեց հրեշտակը և ասաց, որ նա շուտով պետք է որդի ունենա: Հրեշտակը Զաքարիային պատվիրեց ապագա մանկանն անվանել Հովհաննես:

Ծեր քահանան չհավատաց այս խոսքերին: Այդ թերահավատության պատճառով հրեշտակը մինչև երեխայի ծնվելը Զաքարիային զրկեց խոսելու կարողությունից:

Անցավ որոշ ժամանակ: Չնայած Զաքարիան դեռ չէր կարողանում խոսել, սակայն ինքն ու կինը շատ երջանիկ էին, որովհետև շուտով երեխա էին ունենալու:

Որդու ծննդից հետո՝ անվանակոչության օրը, Զաքարիայի խոսելու կարողությունը վերականգնվեց: Եվ ինչպես պատվիրել էր հրեշտակը, տղային անվանեց Հովհաննես, որ նշանակում է **Աստծու շնորհ**:

Հովհաննեսը քարոզում է և մկրտում

Մանուկը մեծանում էր և իր խելքով հիացնում ծնողներին ու հարազատներին:

Երբ Հովհաննեսը դարձավ չափահաս, նա հեռացավ մի ամայի, անմարդաբնակ վայր:

Անապատը բնակավայրից բաժանվում էր **Հորդանան** գետով: Մարդիկ անցնում էին գետը՝ նրան տեսնելու և լսելու: Նա մարդկանց քարոզում* էր **Փրկչի** մոտալուտ գալստյան մասին:

Շուտով Հովհաննեսի մասին շատերն իմացան և ընդունեցին նրան որպես սուրբ և մարգարե:

Մարդիկ նրան հարցնում էին, թե ինչ անեն, որ Աստված ների իրենց մեղքերը: Հովհաննեսը պատասխանում էր, որ անհրաժեշտ է **խոստովանել***,

Հիսուսի մկրտությունը

մեղք չգործել, լինել բարի ու գթառատ, հավատալ Աստծուն:

Ովքեր հավատում էին և խոստովանում, Հովհաննեսը նրանց մկրտում* էր գետում: Դրա համար էլ ժողովուրդը նրան անվանեց Հովհաննես **Մկրտիչ**:

XIII դարի մանրանկար. «Մկրտություն»

Հովհաննեսը մկրտում է Հիսուսին

Երբ լրացավ Հիսուսի 30 տարին, նա գնաց Հորդանան գետի ափը, որտեղ մկրտում և քարոզում էր Հովհաննեսը: Հիսուսը խնդրեց իրեն ևս մկրտել: Չնայած Հովհաննեսը Հիսուսին չէր տեսել, բայց անմիջապես հասկացավ, թե ով է կանգնած իր դիմաց: Նա հասկանում էր, որ Աստծու որդին կարիք չունի մկրտության, ուստի և հրաժարվեց մկրտել՝ ասելով, որ Հիսուսը պետք է իրեն մկրտի, և ոչ թե ինքը՝ նրան: Սակայն երբ Հիսուսը պնդեց, թե այդպես է պետք, Հովհաննեսը հնազանդվեց և մկրտեց Հիսուսին:

Հովհաննես Մկրտիչ

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞վ էր Հովհաննես Մկրտիչը:
2. Ի՞նչ էր անում նա գետի ափին:
3. Քանի՞ տարեկան էր Հիսուսը, երբ մկրտվեց:

բ) Ձույգերով ուշադիր կարդացեք «Հովհաննեսը մկրտում է Հիսուսին» հատվածը և մաս առ մաս վերնագրեք այն:

գ) Եկեք քննարկենք և բանավիճենք:

Ինչո՞ւ Հովհաննես Մկրտիչը չէր ուզում մկրտել Հիսուսին:

Հարստացնենք մեր բառապաշարը

Խնկարկել, գթառատ, քարոզել, խոստովանել, մկրտել:

Բառարան

Խնկարկել – խունկ ծխեցնել. խունկը ծառի խեժից պատրաստված անուշահոտ նյութ է, որն օգտագործվում է եկեղեցական արարողությունների ժամանակ:
Քարոզել – բացատրել և ուսուցանել:
Մկրտել – ընկղմել ջրի մեջ, մաքրել մեղքերը:
Խոստովանել – գիտակցել սեփական սխալներն ու անկեղծ պատմել:

Լրացուցիչ նյութ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՉԸ

Պատմում են, որ երբ նորածին Անդրանիկին քահանան ուզում է մկրտել, հանկարծ դրսում ձիու պայտերի ձայն է լսվում: Ներս է մտնում մի մարդ, մանկանը վերցնում քահանայի ձեռքից և ընկղմում ջրի մեջ: Հետո երեխային տալիս է քահանային ու անհետանում: Ներկաները զարմանքով տեսնում են, որ երեխայի մեջքին խաչ է պատկերվել: Հասկանում են, որ խորհրդավոր անծանոթը սուրբ Գևորգն էր:

Այդ մկրտության խաչը այլևս չանհետացավ Անդրանիկի մեջքից:

Պատմում են նաև, որ երբ Անդրանիկն իր քաջերի գլուխն անցած մարտնչում էր ռազմի դաշտում, թշնամու գնդակները երբեք չէին դիպչում նրան: Պատահել է նաև, որ մարտից հետո նրա հագուստի վրա փամփուշտներից առաջացած անցքեր են եղել: Սակայն Անդրանիկը կռվի դաշտում երբեք չի վիրավորվել: Ասում են՝ սուրբ Գևորգի մկրտության խաչն էր պահում և պահպանում նրան:

Սուրբ Գևորգ

16 ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիսուս Քրիստոսն իր առաքելությունն սկսելուց առաջ գնաց անապատ: Անապատում նա առանձնության մեջ ապրեց 40 օր: Այնտեղ սաստիկ շոգ էր: Չորսբոլորը միայն ավազ ու քարեր էին: Հիսուսի շուրջը թունավոր սողուններ կային, բայց ոչ մեկը չէր մոտենում նրան:

Նա անընդհատ աղոթում էր և մտածում մարդկանց փրկության մասին:

Առաջին փորձությունը

Հիսուսը 40 օր ոչինչ չկերավ և քաղց զգաց: **Սատանան***, որ անընդհատ հետևում էր Հիսուսին, մոտեցավ նրան, որպեսզի փորձի և **մոլորեցնի***: Նա ասաց, որ եթե Հիսուսն իրոք Աստծու որդին է, թող այնպես անի, որ անապատի քարերը հաց դառնան:

Հիսուսը, չնայած շատ քաղցած էր և կարող էր քարերը հաց դարձնել, չխաբվեց: Նա պատասխանեց, որ **մարդը միայն հացով չի ապրում, այլ նաև Աստծու խոսքով:**

Երկրորդ փորձությունը

Սատանան չնայած պարտվեց, չհեռացավ և շարունակեց փորձել Հիսուսին: Տեսնելով, որ ուտելիքի միջոցով չկարողացավ մոլորեցնել՝ նա այլ միջոցի դիմեց: Այս անգամ Հիսուսին տարավ մի բարձր աշտարակի վրա և ասաց, որ եթե նա Աստծու որդին է, թող իրեն ցած նետի: Եթե Աստված սիրում է իր որդուն, ապա նա չի թողնի, որ Հիսուսը վնասվի:

Բայց Հիսուսը իրեն ցած չգցեց և պատասխանեց, որ **Աստծուն փորձել չի կարելի**:

XIII դարի մանրանկար, «Հիսուսի փորձությունները»

Երրորդ փորձությունը

Սատանան կրկին պարտվեց, բայց շարունակեց Հիսուսին փորձելու և մոլորեցնելու նոր ուղիներ փնտրել: Այս անգամ նա Հիսուսին ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները, նրանց փառքն ու հարստությունները: Նա ասաց, որ եթե Հիսուս Քրիստոսն իր առաջ խոնարհվի, այդ բոլորը նրան կտա: Բայց Հիսուսը պատասխանեց, որ միայն Աստծուն պետք է **երկրպագել**:

Սատանան, տեսնելով, որ անկարող է պարտության մատնել Հիսուսին, թողեց-հեռացավ:

Հիսուս Քրիստոսը հաջողությամբ հաղթահարեց բոլոր երեք փորձությունները:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ էր անում Հիսուս Քրիստոսն անապատում:
2. Ո՞վ մոտեցավ Հիսուսին և ինչո՞ւ:
3. Ի՞նչ փորձության ենթարկվեց Հիսուսն առաջին անգամ:
4. Ո՞րն էր երկրորդ փորձությունը:
5. Ի՞նչ պատասխանեց Հիսուսը երրորդ փորձության ժամանակ:

բ) Եկեք քննարկենք և բանավիճենք:

Փորձե՛ք համեմատել Հիսուսի և Ադամի փորձությունները:

գ) Փորձե՛ք բացատրել:

Ինչպե՞ս եք հասկանում «Մարդը միայն հացով չի ապրում, այլ նաև Աստծու խոսքով» արտահայտությունը:

դ) Ուշադիր կարդացե՛ք այս մտքերը:

- **Կարևոր որոշումներ կայացնելուց առաջ պետք է լավ մտածել ու կշռադատել:**
- **Մարդը միայն ուտելու համար չէ, որ ապրում է: Կերակուրը, ուտելիքը ընդամենը միջոց են, որ մարդ կարողանա ապրել, ստեղծագործել, բարի գործեր կատարել:**
- **Մարդը պետք է հավատարիմ լինի իր խոսքին, գործին և հավատին:**
- **Չի կարելի լինել փառասեր:**

Հարստացնենք մեր բառապաշարը

Փորձություն, փառասիրություն, մոլորեցնել, երկրպագել:

Բառարան

Սատանա – անձնավորված չար ոգի, խարդախ, խաբեբա, խորամանկ:
Մոլորեցնել – խաբել, շեղել ճիշտ ճանապարհից:

Լրացուցիչ նյութ

ԼԱՎ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Երկու ընկերներ որոշեցին ճանապարհորդել: Մի օր ճանապարհորդները հասան մի քաղաք, որի դարպասների վրա մարդկանց գլուխներ էին կախված: Նրանք ներս մտան քաղաք և դռնապաններին հարցուփորձ արեցին: Դռնապանները պատմեցին, որ դրանք օտար ճանապարհորդների գլուխներ են: Այդ միջոցին եկան թագավորի ծառաները և նրանց պալատ հրավիրեցին:

Թագավորը նրանց պատվին ճոխ հյուրասիրություն կազմակերպեց: Հյուրասիրության ընթացքում, երբ ընկերներից մեկը ինչ-որ առիթով դուրս եկավ սենյակից, թագավորը մյուս ընկերոջը հարցրեց.

- Ամոթ չէ՞, որ քեզ պես պատվավոր մարդը նման հասարակ մարդու հետ է ճանապարհորդում:

Ընկերը պատասխանեց.

- Դուք սխալվում եք, Ձերդ մեծություն: Իմ ընկերը բոլորովին էլ հասարակ մարդ չէ: Նա իսկական ընկեր է, և ես ոչ թե ամոթ, այլ մեծ պատիվ եմ համարում նրա հետ ընկերություն անելը:

Շուտով ներս մտավ դրսում գտնվողը:

Որոշ ժամանակ անց մյուս ընկերը դուրս եկավ: Այս անգամ թագավորը փորձեց երկրորդին՝ ասելով.

- Ինձ թվում է, որ դու հարուստ տոհմի զավակ ես: Ինչո՞ւ ես անարժան մարդու հետ շրջում և արատավորում քո պատիվը:

- Ո՛վ մեծ թագավոր, իմացած եղիր, որ թեև իմ ընկերը հարուստ տոհմից չէ, բայց շատ ազնիվ մարդ է: Նա բազում նեղություններից է ինձ փրկել, և ես հպարտ եմ այդպիսի ընկեր ունենալու համար:

Թագավորը, օտարականներին թանկարժեք նվերներ տալով, ճանապարհ դրեց:

Պալատականները շատ զարմացան և հարցրին թագավորին, թե ինչու այս օտարականներին ևս սպանել չտվեց, այլ մեծ պատիվների արժանացրեց: Թագավորը պատասխանեց.

- Նախորդներին ես հրամայում էի սպանել, որովհետև նրանք սեփական արժանիքները բարձրացնելու համար չարախոսում էին իրենց ընկերներին: Իսկ սրանցից յուրաքանչյուրը հպարտանում էր մյուսի արժանիքներով:

Այս առակը սովորեցնում է, որ նրանք, ովքեր փորձության ժամին չեն դավաճանում, չեն վախենում և չեն հրաժարվում իրենց սկզբունքներից, գնահատվում և պարգևների են արժանանում:

Հիսուսը անապատում

17. ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հիսուսը վերադարձավ անապատից, մարդկանց սկսեց պատմել Աստծու մասին: Իր առաքելությունն իրագործելու համար նրան անհրաժեշտ էին ազնիվ, նվիրված, խիզախ և անձնազոհ օգնականներ: Թեև նա բազում հետևորդներ ուներ, սակայն ընտրեց միայն **տասներկուսին**:

Մի անգամ, երբ Հիսուսն անցնում էր ծովափով, տեսավ երկու ձկնորս եղբայրների՝ **Պետրոսին** և **Անդրեասին**: Նրանք ձուկ էին որսում: Հիսուսը մոտեցավ նրանց և ասաց, որ հետևեն իրեն: Նրանք թողեցին նավակն ու ձկնորսական ցանցերը և գնացին Հիսուսի ետևից:

Հովհաննես առաքյալ

Քիչ այն կողմ **Հակոբոսն** ու **Հովհաննեսը** իրենց հոր հետ ուռկաններն էին նորոգում: Հիսուսը նրանց էլ կանչեց, և ձկնորս եղբայրները նույնպես հետևեցին նրան:

Հետո Հիսուսը հանդիպեց **Փիլիպոսին**: Նա իր ընկեր **Բարդուղիմեոսի** հետ ևս միացավ աշակերտների խմբին:

Հաջորդ աշակերտը, որ ընտրվեց, **Մատթեոսն** էր: Նա մաքսավոր* էր: Մաքսավորներին ժողովուրդը չէր սիրում, որովհետև նրանք սահմանված չափից ավելի շատ էին հարկ հավաքում: Բայց Մատթեոսը, լսելով Հիսուսի խոսքը, թողեց գործը և գնաց նրա հետևից:

Որոշ ժամանակ անց Հիսուսը բարձրացավ մի լեռան վրա և ամբողջ գիշեր աղոթեց: Լուսաբացին նրա շուրջը հավաքվեցին շատ հետևորդներ: Նրանցից Հիսուսը դարձյալ աշակերտներ ընտրեց: Աշակերտների թիվը հասավ տասներկուսի՝ **Պետրոսը, Անդրեասը, Հովհաննեսը, Փիլիպոսը, Բարդուղիմեոսը, Թադեոսը, Մատթեոսը, Թովմասը, Սիմոնը և Հուդան, Զեբեդեոսի որդի Հակոբոսն ու Ալփեոսի որդի Հակոբոսը**:

Հիսուս Քրիստոսն իր աշակերտներին ընտրեց հասարակ մարդկանցից: Նրանց մեծ մասը աղքատ և անուս ձկնորսներ էին: Մի մասն էլ ամենօրյա ապրուստը ճակատի քրտինքով վաստակող աշխատավորներ էին:

Աշակերտները երեք տարի շրջեցին Հիսուսի հետ, հավատարմորեն հետևեցին իրենց ուսուցչի պատվիրաններին, եղան նրա գործերի և հրաշքների ականատեսները:

Հիսուսը իր աշակերտների հետ

Նրանք սիրում էին Հիսուսին, նրան անվանում էին **Տեր*** **և Ուսուցիչ**: Իսկ Հիսուսը նրանց անվանում էր եղբայրներ կամ բարեկամներ և նրանց հետ կիսում էր ամեն ինչ:

Հետագայում աշակերտները կոչվեցին **առաքյալներ**: Նրանք այսպես կոչվեցին, որովհետև Հիսուսը նրանց պատվիրեց գնալ աշխարհի բոլոր կողմերը՝ **ուսուցանելու և քարոզելու Ավետարանը, բժշկելու և մկրտելու** մարդկանց: Նրանք բազում նեղություններ կրեցին, ծանր հալածանքների ենթարկվեցին, բայց չընկճվեցին* և անսահման համբերությամբ շարունակեցին քարոզել Աստծու խոսքը:

Հիսուսի աշակերտների շնորհիվ բազմաթիվ երկրներում ձևավորվեցին **քրիստոնեական համայնքներ**, հիմնվեցին **եկեղեցիներ**:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Փորձենք վերհիշել:

1. Ինչո՞ւ Հիսուսն ընտրեց աշակերտներ:
2. Հիսուսի ո՞ր աշակերտներն էին ձկնորսներ:
3. Ինչպե՞ս էին աշակերտները կոչում Հիսուսին:
4. Ի՞նչ պատվիրեց Հիսուսն առաքյալներին:
5. Ի՞նչ արեցին առաքյալները բազմաթիվ երկրներում:

բ) Փորձե՛ք թվարկել տասներկու առաքյալների անունները:

Բառարան

Մաքսավոր – հարկահավաք:
Ընկճվել – վհատվել, հուսահատվել:
Տեր – այդպես են անվանում և դիմում Աստծուն:

ԼՈԱԾՈՒԾԻՉ ԱՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի ուսմունքը տարածեցին ոչ միայն նրա տասներկու աշակերտները: Նոր կտակարանում կան բազմաթիվ նամակներ, քարոզներ, որոնց հեղինակը Պողոս առաքյալն է: Պողոսը Հիսուսին նվիրված լինելու և նրա պատվիրանները քարոզելու համար նույնպես կոչվում է առաքյալ:

Սկզբում Պողոսը քրիստոնյաների հակառակորդն էր և **փարիսեցի***: Քրիստոնյաներին հալածելու պատճառով նա կուրանում է, սակայն հրաշք է տեղի ունենում, և Հիսուս Քրիստոսի օգնությամբ վերականգնվում է նրա տեսողությունը:

Դրանից հետո նա մկրտվում է և իրեն նվիրում Հիսուս Քրիստոսի պատվիրանների տարածմանը:

Բառարան

Փարիսեցի – օրենքի և կրոնական ավանդույթների կեղծ պահապան:

Պետրոս և Պողոս առաքյալները

18 ՀԻՍՈՒՍԸ ՕԳՆՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ

«Այն ամենը, ինչ կկամենաք,
որ մարդիկ ձեզ անեն,
այդպես և դո՛ւք արեք նրանց»:
«Ոսկե կանոն»

Հիսուսը քարոզելու և **Աստծու պատվիրանները** մարդկանց սովորեցնելու նպատակով շրջում էր քաղաքներում և գյուղերում: Նա ոչ միայն քարոզում, այլև օգնում էր կարիքավորներին: Հիսուսի աշակերտները պատմում են, որ մի անգամ նրան լսելու համար հավաքվել էին բազմաթիվ մարդիկ: Զրույցն ավարտվեց բավականին ուշ: Հիսուսը չցանկացավ ժողովրդին քաղցած տուն ճանապարհել և պատվիրեց աշակերտներին՝ կերակրել նրանց: Պարզվեց, որ եղած հացն ու ձուկը շատ քիչ են: Հիսուսը վերցրեց դրանք, օրհնեց և տվեց աշակերտներին, նրանք էլ՝ ժողովրդին: Մարդիկ մոտենում, վերցնում էին այնքան, որքան կամենում էին, բայց հացն ու ձուկը չէին վերջանում: Այդպիսի երևույթները մարդիկ անվանում էին հրաշքներ: Սակայն դրանով Հիսուսը ցույց էր տալիս իր աստվածային ամենակարողությունը: Այդ պատճառով շատ հիվանդներ, որ հավատում էին Հիսուսին և դիմում էին նրան, բոլորն էլ առողջանում էին. խուլերը լսում էին, կույրերը՝ տեսնում, կաղերն ու անդամալույծները* քայլում էին, բորոտները* մաքրվում էին վերքերից: Հիսուսի բուժած մարդկանց մասին վկայություններն այնքան շատ են, որ հնարավոր չէ բոլորը հիշատակել:

Հիսուսը բուժում է կույրին

Քրիստոսը նաև խրատներ էր տալիս մարդկանց և սովորեցնում, թե ինչպես ճիշտ ապրեն: Նա սիրում էր կրկնել հետևյալ միտքը. **«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դու՛ք արեք նրանց»:** Այդ իմաստուն խորհուրդը հետագայում կոչվեց **«Ոսկե կանոն»**:

Իշխանավորներն ու փարիսեցիները նախանձով ու չարությամբ էին

լցված Հիսուսի նկատմամբ, որովհետև նա իր առակների և զրույցների միջոցով ցույց էր տալիս ու դատապարտում նրանց ագահությունն ու կեղծավորությունը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ է հրաշքը:
2. Ինչո՞ւ էր Հիսուսը հրաշքներ գործում:
3. Ի՞նչ է ասում «Ոսկե կանոնը»:

բ) Եկեք քննարկենք և բանավիճենք:

Բացատրե՛ք «Ոսկե կանոնի» իմաստը:

գ) Անգի՛ր սովորեք «Ոսկե կանոնը»:

Բառարան

Անդամալույծ - հաշմանդամ, շարժվելու կարողությունից զրկված:
Բորոտ - անբուժելի, վարակիչ մաշկային հիվանդությամբ տառապող մարդ:

Հիսուսը բուժում է հիվանդին

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՅՈՒԹ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Գրիգոր Նարեկացին միջնադարյան հայ նշանավոր բանաստեղծներից է: Նրա մասին ժողովուրդը բազմաթիվ ավանդություններ է պատմում: Մարդիկ հրաշագործ ուժ են վերագրում անգամ նրա «Մատյան ողբերգության» աղոթագրքին, որին ժողովրդական լեզվով Նարեկ են անվանում: Հիվանդների ապաքինման համար, որպես աղոթք, հաճախ Նարեկ են կարդում, իսկ գիրքը դնում բարձի տակ:

Գրիգոր Նարեկացի

Ավանդությունը պատմում է, որ մի անգամ Նարեկացուն նախանձող մարդիկ նրան զրպարտում են կաթողիկոսի մոտ:

Կաթողիկոսը եպիսկոպոսներ է ուղարկում Նարեկա վանք: Երբ նրանք տեղ են հասնում, Գրիգորը պատվիրում է հյուրերի համար ճաշ բերել: Այդ օրը միս ուտել չէր կարելի: Սակայն, ի զարմանս բոլորի, տապակած աղավնի մատուցեցին:

Եպիսկոպոսները, երբ տեսան տապակած թռչունները, ասացին.

– Հա՛յր սուրբ, մի՞թե պահքի օրերին կարելի է միս ուտել:

Գրիգորը հասկացավ, որ դա իր թշնամիների դավադրությունն է, բայց չշփոթվեց, այլ վերցնելով տապակած աղավնիները՝ սկսեց աղոթել: Հյուրերի աչքի առջև թռչունները հանկարծ կենդանացան ու թև առնելով՝ թռան պատուհանից: Եպիսկոպոսները, տեսնելով նրա կատարած հրաշքը, ներողություն խնդրեցին և վերադարձան:

19. Իմաստուն խորհուրդներ

Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսի համբավը տարածվել էր ամբողջ երկրում: Ուր նա գնում էր, բազմաթիվ մարդիկ հավաքվում և սիրով լսում էին նրան: Նրա խրատները վերաբերում էին **Աստծու հանդեպ հավատին, ծնողասիրությանը, ընկերասիրությանը, պարկեշտությանը, ազնվությանը**:

Փարիսեցիները, որոնք կարծում էին, թե իրենք չափազանց խելացի ու արդարամիտ են, միշտ վեճի էին բռնվում Հիսուսի հետ՝ նրան հեղինակազրկելու համար: Այդ բանավեճերից հետո մարդիկ զարմանքով նկատում էին, որ Հիսուսն ամեն ինչ ավելի լավ գիտի, քան իրենց ամենագետ համարող **դպիրներն*** ու փարիսեցիները: Այդ պատճառով էլ ոչ միայն Հիսուսի աշակերտները, այլև ժողովուրդը նույնպես նրան **Ուսուցիչ և Վարդապետ** էր անվանում:

Սիրել միմյանց

Հիսուս Քրիստոսն անընդհատ շեշտում էր, թե ամեն մարդ պետք է **սիրի և հարգի Աստծուն և իր ծնողներին**:

Հիսուսն իր աշակերտներին և մարդկանց պատվիրում էր նաև **սիրել միմյանց**: Նա ասում էր, թե իսկական բարեկամությունը պետք է հիմնված լինի փոխադարձ սիրո ու վստահության վրա և ոչ թե անձնական շահի: Իսկական բարեկամները նրանք են, ովքեր նույնիսկ իրենց կյանքը չեն խնայում ընկերոջ համար:

Հիսուսը խորհուրդներ է տալիս

Ազնվություն և պարկեշտություն

Հիսուսը պահանջում էր **լինել ազնիվ** և **սուտ չխոսել:** Նա արգելում էր նաև խոսքը հաստատելու համար **երդվելը**: Եթե մարդը ճշմարտախոս է, ապա կարիք չունի երդվելու:

Հիսուս Քրիստոսը հանդիմանում էր փարիսեցիներին, որոնք անազնիվ էին և կեղծավոր: Ուստի նա խորհուրդ էր տալիս չնմանվել փարիսեցիներին:

Մեծ Ուսուցիչը պատվիրում էր նաև **լինել բարի, գթառատ, օգնել** կարիքի մեջ գտնվող մարդկանց, աղքատներին ու չքավորներին: Նա պատգամում էր **լինել ներողամիտ, ուղղել սեփական սխալները**:

Խրատին հետևողը իմաստուն է

Քրիստոսը ուսուցանում էր, որ բոլոր նրանք, ովքեր լսում և հետևում են իր խրատներին, կնմանվեն այն **իմաստուն մարդուն**, որն իր տունը ամուր հիմքի վրա է կառուցում: Ինչպես քամիներն ու անձրևները չեն կարող վնասել այդ տանը, որովհետև նրա հիմքը ամուր է, այնպես էլ կյանքի փորձությունները չեն կարող վնասել իր խրատներին հետևող մարդկանց: Այդպիսի մարդիկ սիրելի են Աստծուն:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչպե՞ս էին վերաբերվում մարդիկ Հիսուսին:
2. Ի՞նչ էր խորհուրդ տալիս Հիսուսը ծնողների վերաբերյալ:
3. Ինչպիսի՞ն պիտի լինի իսկական բարեկամությունը:
4. Ի՞նչ էր ասում Հիսուսը ճշմարտախոսության վերաբերյալ:
5. Ո՞վքեր են նման իմաստուն մարդու:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ընկերասիրություն, ծնողասիրություն, ճշմարտախոս, գթառատ, ներողամիտ:

Բառարան

Դպիր – հրեական կրոնական օրենքի գիտակ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՅՈՒԹ

ՈՐԴԻՆԵՐԸ

Գյուղի ծայրին գտնվող աղբյուրից երեք կին ջուր էին լցնում դույլերը: Աղբյուրին է մոտենում մի ալեզարդ ծերունի և նստում քարին:

Կանանցից երկուսը, իրար հերթ չտալով, պարծենում էին իրենց որդիներով: Առաջին կինն ասում էր, որ իր որդին շատ ուժեղ է ու ճարպիկ: Մյուս կինն անմիջապես ավելացնում էր, որ իր որդին էլ հրաշալի ձայն ունի ու սոխակից էլ քաղցր է երգում:

Իսկ երրորդը լուռ էր: Նրա որդին որևէ բացառիկ շնորհքով օժտված չէր, և նա կարծես ամաչում էր դրա համար:

Կանայք, դույլերը լցնելով, ճանապարհ ընկան տուն: Ծերունին հետևեց նրանց: Դույլերը ծանր էին, իսկ ճանապարհը՝ երկար: Նրանք հաճախ կանգնում էին հանգստանալու: Երկու կանայք ամբողջ ճանապարհին շարունակում էին գովերգել իրենց որդիներին:

Հանկարծ նրանց ընդառաջ եկան իրենց որդիները: Առաջին երկու կանանց որդիները ժպտացին մայրերին ու անցան նրանց կողքով, իսկ երրորդը մոտեցավ մորը, ձեռքից վերցրեց դույլերը և տարավ տուն: Ծերունին հարցրեց երկու կանանց, թե որտեղ են նրանց գոված որդիները, որովհետև ինքը միայն մի որդու տեսավ:

20. ԱՄԵՆԱՄԵԾ ՆՎԵՐԸ

Հիսուսը տաճարում

Միջնադարյան որմնանկար

Մի անգամ Հիսուսն իր աշակերտների հետ կանգնած էր Երուսաղեմի տաճարի դռան առջև: Նրանք դիտում էին, թե ինչպես մարդիկ, տաճարից դուրս գալով, սովորույթի համաձայն նվերներ էին գցում **գանձանակի*** մեջ: Մեծահարուստները բավականաչափ դրամ գցեցին: Մոտեցավ նաև մի այրի կին և իր ունեցած երկու **լումա՝ն*** գցեց ու անցավ:

Հիսուսը հարցրեց իր աշակերտներին, թե այս մարդկանցից ում նվերն էր ավելի արժեքավոր, և ով ավելի շատ գումար տվեց: Աշակերտները չկարողացան պատասխանել:

Այդ ժամանակ նա բացատրեց աշակերտներին, որ թեև հարուստներն ավելի մեծ գումար գցեցին, բայց տվեցին իրենց ավելորդ դրամներից: Իսկ այրի կինը շատ աղքատ էր, և նրա ամբողջ ունեցածն ընդամենը այդ երկու լումա՝ն էր: Ուրեմն այդ կինն ավելի շատ տվեց, որովհետև **նվիրեց իր ամբողջ ունեցածը**:

Պարկեշտություն և գոռոզություն

Ծիծեռնավանքի խորանը

Երկու մարդ աղոթում էին տաճարում: Նրանցից մեկը կեղծավոր ու երկերեսանի մի մարդ էր (փարիսեցին), մյուսը՝ մի մեղավոր մարդ (մաքսավորը):

Փարիսեցին կանգնել էր առանձին, այնպես, որ բոլորը տեսնեին իրեն, և աղոթում էր Աստծուն՝ գովելով իր արժանիքները: Փարիսեցին հպարտանում էր, որ ուրիշների պես խաբեբա և ագահ չէ: Մինչդեռ մի անկյուն քաշված մաքսավորը չէր համարձակվում գլուխը վեր բարձրացնել և Աստծուց ներում էր աղերսում:

Տեսնելով նրանց՝ Հիսուսն աշակերտներին ասաց, որ մաքսավորը կարող է ներվել, որովհետև

ընդունեց իր սխալները և զղջաց: Իսկ փարիսեցին, որ հպարտանում էր իր բարեպաշտությամբ և արդարությամբ, չի ներվի: Գոռոզամիտ, ուրիշների նկատմամբ իրենց ունեցած առավելությունները ցույց տվող մարդիկ հաճելի չեն ո՛չ մարդկանց և ո՛չ էլ Աստծուն:

Հիսուսն օրհնում է երեխաներին

Ծնողները հաճախ Հիսուսի մոտ էին բերում իրենց երեխաներին, որ նա օրհնի նրանց: Մի անգամ, երբ նա իր աշակերտների հետ դուրս էր գալիս տաճարից, շատ մայրեր իրենց զավակների հետ փորձում էին մոտենալ նրան: Սակայն Հիսուսի աշակերտները թույլ չտվեցին մանուկներին մոտենալ՝ մտածելով, որ նա հոգնած է և չարժե անհանգստացնել: Բայց նկատելով այդ՝ Հիսուսը հանդիմանեց նրանց և ասաց, որ թույլ տան երեխաներին մոտենալ իրեն:

Երբ երեխաները մոտեցան Հիսուսին, նա գրկեց, փաղաքշեց և ջերմորեն զրուցեց նրանց հետ: Հետո նա ձեռքը դրեց երեխաների գլխին և բոլորին օրհնեց:

Հիսուսն անսահման բարի էր և շատ էր սիրում երեխաներին: Նա հաճախ ասում էր, որ մարդիկ պետք է լինեն մանուկների պես անկեղծ ու մաքուր:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչո՞ւ այրի կնոջ գցած երկու լուման ավելի շատ էր մյուսների գցածից:
2. Ովքե՞ր էին աղոթում տաճարում:
3. Փարիսեցին ինչպե՞ս էր աղոթում:
4. Ի՞նչ էր խնդրում մաքսավորն Աստծուց:
5. Աստված ո՞ւմ աղոթքը լսեց:
6. Ինչպե՞ս էր Հիսուսը վերաբերվում երեխաներին:

բ) Եկե՛ք քննարկենք:

1. Ո՞ւմ է սիրում Աստված:
2. Ինչո՞ւ մաքսավորը ներում ստացավ, իսկ փարիսեցին՝ ոչ:

Հարստացնենք մեր բառապաշարը

Մեծամիտ, բարեպաշտություն:

Բառարան

Լումա – մանր դրամ:
Գանձանակ – դրամը պահելու տեղ:

Լրացուցիչ նյութ

ԽՆՁՈՒՅՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Մի անգամ Հիսուսին խնջույքի էին հրավիրել: Այնտեղ բազում այլ հրավիրվածներ կային, և շատերն էին ցանկանում նստել սեղանի պատվավոր տեղում:

Այդ տեսնելով՝ Հիսուսն աշակերտներին տվեց մի իմաստուն խորհուրդ ևս.

«Երբ ձեզ հարսանիքի կամ խնջույքի հրավիրեն, դուք մի՛ փորձեք այս մարդկանց նման պատվավոր տեղում նստել: Միգուցե հրավիրվածների մեջ ձեզանից ավելի հարգված մեկը նույնպես լինի: Տանտերը, բնականաբար, կխնդրի պատվավոր տեղը զիջել նրան: Այդ ժամանակ դուք ամոթահար ստիպված կլինեք տեղափոխվել մեկ այլ տեղ:

Իսկ եթե դուք, հրավիրվելով խնջույքի, վերջին աթոռին նստեք, տանտերը, այդ տեսնելով, ձեզ պիտի խնդրի տեղափոխվել ավելի պատվավոր տեղ: Այդ ժամանակ դուք հրավիրվածների մոտ մեծարված կլինեք»:

Վերջում Հիսուսն ավելացրեց. «Ով որ ինքն է իր անձը մեծարում և բարձրացնում, կարող է խայտառակվել: Իսկ նա, ով համեստ է ու պարկեշտ, կմեծարվի ուրիշների կողմից»:

– Ով համեստ է ու պարկեշտ, կմեծարվի:

21. ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Մարդկանց հետ զրուցելիս և քարոզելիս Հիսուս Քրիստոսն իր միտքն ավելի հասկանալի դարձնելու համար հաճախ խոսում էր **առակներով:** Նրա առակները առասպելական կամ հեքիաթային պատմություններ չէին: Այստեղ չկային երգող կենդանիներ, թռչող գազաններ, խոսող թռչուններ: Դրանք վերցված էին իրական կյանքից, առօրյա կենցաղից:

Հիսուսը աշակերտների հետ

Հիսուսն առակներով էր խոսում, որովհետև առակի միջոցով արտահայտված խոսքը շատ ավելի տպավորիչ է: Այն մարդկանց հիշողության մեջ հաճախ պահպանվում է ավելի երկար, քան ուղիղ խոսքը, որը երբեմն շուտ է մոռացվում:

Նա առակների միջոցով մարդկանց ներկայացնում էր Աստծու խոսքը: Դրանք հասկանում էին գրեթե բոլորը: Իսկ երբ մարդիկ ինչ-որ բան չէին հասկանում, Հիսուսը սիրով բացատրում էր նրանց:

Մի անգամ Հիսուսն իր շուրջը հավաքված մարդկանց պատմեց հետևյալ առակը:

Մի սերմնացան ցանում է իր արտը: Ցանելու ժամանակ սերմերի մի մասը ընկնում են ճանապարհի եզրին: Սերմերը բաց են մնում, և թռչունները դրանք ուտում են:

Սերմերից մի քանիսը քարքարոտ ապառաժի* վրա են ընկնում: Դրանք շուտ ծլում և կանաչում են, բայց երբ արևը ծագում է, ծիլերը խանձվում ու չորանում են, որովհետև նրանք խոր արմատներ չունեին:

Սերմերի մի մասն էլ փշերի մեջ են ընկնում: Սրանք էլ են ծլում, սակայն մեծանալ ու պտուղ տալ չեն կարողանում, որովհետև փշերը բարձրանում ու խեղդում են ծիլերը:

Մյուս սերմերն ընկնում են պարարտ* հողի մեջ և աճելով՝ ցորենով լի հասկեր են դառնում: Սերմերը բերք են տալիս՝ մեկի դիմաց երեսուն, վաթսուն, հարյուր...

Հիսուսը մեկնաբանում է առակի իմաստը

Ներկաներից մի քանիսը լավ չհասկացան առակի իմաստը և Հիսուսին խնդրեցին բացատրել այն: Նա ասաց, որ այս առակում սերմնացանը նման է իրեն՝ Հիսուսին: Սերմնացանը ցորեն է ցանում, իսկ ինքը Աստծու խոսքն է տարածում: **Սերմերը իր քարոզներն են:** Հողը, ապառաժ քարը, ճանապարհը և փշերը տարբեր մարդիկ են:

Հայկական որմնաքանդակ

Ճանապարհը նման է այն մարդկանց, ովքեր լսում են Աստծու խոսքը, բայց ուշադրություն չեն դարձնում: Այդպիսի մարդիկ սոսկ իրենց հաճույքների մասին են մտածում և ամեն բան անում են միայն անձնական շահի համար: Այդ պատճառով չարը հեշտությամբ մոլորեցնում է նրանց, և նրանք մոռանում են Աստծու խոսքը:

Քարքարոտ հողը բնութագրում է այն մարդկանց, ովքեր լսում են Աստծու խոսքը և իսկույն ուրախությամբ ընդունում այն: Նրանք ցանկանում են բարիք գործել, բայց քանի որ նրանց հավատը ամուր հիմքեր չունի, դժվարության կամ նեղության պահին շեղվում են ճիշտ ճանապարհից:

Փշոտ, մոլախոտերով լի հողը համեմատվում է այն մարդկանց հետ, ովքեր լսում են Աստծու խոսքը և ցանկանում հետևել նրան, բայց կյանքի դժվարությունները, հարստության հրապույրն ու զանազան ցանկություններն գրավում են նրանց: Այդ մարդիկ չեն հրաժարվում վատ սովորություններից, որոնք էլ **փշի նման խեղդում են** նրանց մեջ Աստծու խոսքն ու բարիք գործելու ցանկությունը:

Իսկ պարարտ, լավ հողը նման է այն մարդկանց, ովքեր լսում, հասկանում և պահպանում են Աստծու խոսքը: Այդպիսի մարդկանց գործերը **բարի պտուղներ** են տալիս, ինչպես ցորենի սերմնահատիկը:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչո՞ւ էր Քրիստոսն առակներով խոսում:
2. Ի՞նչ պատահեց ճանապարհի մոտ ընկած սերմերին:
3. Ինչի՞ են նման Աստծու խոսքը չլսող մարդիկ:
4. Ի՞նչ պատահեց ապառաժի վրա ընկած սերմերին:
5. Ինչպիսի՞ մարդկանց է խորհրդանշում ապառաժը:
6. Ինչո՞ւ չաճեցին փշերի մեջ ընկած սերմերը:

բ) Փորձեք համառոտ պատմել առակը:

գ) Զույգերով պարբերություն առ պարբերություն վերնագրեք «Սերմնացանի առակը» հատվածը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ցանել, ապառաժ, պարարտ:

Բառարան

Ապառաժ – քարաժայռ, քարքարոտ տեղ:
Պարարտ – բերրի, արգավանդ, հարուստ:

Լրացուցիչ նյութ

ՎԱՅՐԻ ԾԱՂԿԵՓՆՁԵՐ

Մեծ քաղաքի հեռավոր թաղերից մեկում մի աղքատ կին էր ապրում իր փոքրիկ որդու հետ: Մայրը վայրի ծաղիկներից գեղեցիկ ծաղկեփնջեր էր պատրաստում: Տղան առավոտից իրիկուն շրջում էր փողոցներում և փորձում դրանք վաճառել անցորդներին: Վաճառքից ստացած խղճուկ միջոցներով էլ նրանք հոգում էին իրենց օրվա ապրուստը:

Արդեն մի քանի օր էր, ինչ նրանք ոչ մի ծաղկեփունջ չէին կարողացել վաճառել: Հոգնած ու քաղցած տղան այլևս չէր կարողանում ոտքի վրա մնալ: Երեք օր ոչ մեկը ուշադրություն չէր դարձնում փոքրիկին և նրա ծաղիկներին: Հուսահատված տղան տխուր նստեց մոր կողքին: Խեղճ մայրն այլևս չկարողացավ զսպել արցունքները և սկսեց արտասվել: Տաք արցունքները ցողերի պես մարգարտացան ծաղիկների վրա: Փոքրիկի աչքերից ևս արցունքի խոշոր կաթիլներ գլորվեցին:

Այդ պահին դիմացից մի մարդ էր անցնում իր դեռատի դստեր հետ: Տղան վերջին հույսով վեր կացավ և մոտեցավ նրանց: Չեռքի ծաղկեփունջը մեկնեց աղջկան և խոշոր ու սև աչքերը հառեց նրա վրա:

Աղջիկը, նկատելով տղայի այտերի վրա ցոլացող արցունքները, հորից գաղտնի մի թղթադրամ գցեց գետին: Տղայի մայրը, տեսնելով ընկնող թղթադրամը,

նրանց ետևից ձայն տվեց.

– Պարո՛ն, օրիո՛րդ, ձեր մոտից թղթադրամ ընկավ:

Աղջիկը չլսելու էր տալիս, բայց կինը, վերցնելով թղթադրամը, շտապեց նրանց ետևից:

Հայրը կանգ առավ, շրջվեց ու վերցրեց թղթադրամը: Եվ որքան էլ աղջիկը համոզում էր, որ դա իրենցը չէ, հայրը, զարմացած մեկ դստերը, մեկ խեղճ կնոջը նայելով, ասաց.

– Մի՞թե այսօր առավոտյան հենց այս թղթադրամը ես քեզ չտվեցի:

Աղջիկն ամոթահար խոնարհեց գլուխը: Արցունքները խեղդում էին կոկորդը: Հայրը շոյեց դստեր գլուխը և ասաց.

– Եթե դու, դժբախտ մոր տառապանքը տեսնելով, ուզում էիր օգնել նրանց, ապա ես նրա ազնվությունը շատ ավելի պիտի գնահատեմ:

Այս ասելով՝ նա հանեց դրամապանակը և մի քանի խոշոր թղթադրամներ մեկնեց կնոջը:

22. Ո Ր Ո Մ Ն Ե Ր Ի Ա Ռ Ա Կ Ը

Քրիստոսը առակներում հաճախ իրեն սերմնացան էր անվանում: Այդ մասին նա մի օր պատմեց հետևյալ առակը:

Մի ագարակատեր* մշակներին պատվիրում է հողը մաքրել փշերից ու քարերից և այնտեղ ցորեն ցանել: Գիշերը, երբ բոլորը քնած են լինում, չարակամ մարդիկ գաղտագողի գալիս և ցորենի արտում **որոմ*** շաղ տալով՝ հեռանում են: Որոշ ժամանակ անց, երբ սերմերը ծլում են և կանաչում, մշակները զարմանում են, թե որոմները որտեղից հայտնվեցին: Նրանք ագարակատիրոջը հայտնում են եղելությունը և հարցնում. «Որտեղի՞ց հայտնվեց որոմը, չէ՞ որ մեր ցանածը բարի սերմեր էին ...»:

Միջնադարյան մանրանկար

Ագարակատերը պատասխանում է, որ հավանաբար չար մարդու կատարած գործ է: Մշակները խնդրում են, որ իրենց թույլ տրվի արտը մաքրել որոմներից: Սակայն ագարակատերը թույլ չի տալիս՝ մտածելով, որ որոմները քաշելիս կարող են անզգուշաբար վնասել նաև ցորենի հասկերը: Նա չէր ցանկանում, որ մեկ հասկ անգամ վնասվի, ուստի որոշեցին թողնել, որ ցորենն էլ, որոմն էլ միասին աճեն: Հնձելուց հետո ցորենը կառանձնացնեն և կամբարեն, իսկ որոմը կայրեն:

Առակի մեկնաբանությունը

Աշակերտները խնդրեցին Հիսուսին բացատրել առակի իմաստը: Նա ասաց, որ ագարակատերը նման է իրեն՝ Հիսուսին, իսկ ագարակն էլ աշխարհն է: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմներն էլ չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմը առանձնացնելը նշանակում է, որ **ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա**:

Աշակերտները խնդրեցին բացատրել նաև, թե ինչու չար մարդիկ միանգամից չպիտի պատժվեն, այլ շարունակեն բարիների հետ հավասար ապրել:

Հիսուսը պատասխանեց, որ չարերին պատժելիս հնարավոր է, որ բարի մարդկանց էլ վիշտ կամ նեղություն պատճառվի: Բացի այդ, չար մարդկանց հնարավորություն է տրված **զղջալու** և **ուղղվելու**: Այսինքն՝ որոմի փոխարեն բարի պտուղներ տալու:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ պատվիրեց ցանել ագարակատերը:
2. Ի՞նչ արեցին չարակամ մարդիկ:
3. Ինչո՞ւ հողատերը թույլ չտվեց մաքրել որոմը:
4. Ե՞րբ պետք է առանձնացնեին ցորենը որոմից:
5. Ի՞նչ են խորհրդանշում ագարակը, ցորենը, որոմը:

բ) Եկեք քննարկենք:

Չար մարդիկ կարո՞ղ են զղջալ և ուղղվել:

Բ ա ռ ա ր ա ն

Որոմ – ցորենին շատ նման, դառնահամ մոլախոտ
Ագարակ – արտ, դաշտ, բանջարանոց

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ ՆՅՈՒԹ

ԻՆՉ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՀՆՁԵՍ

Գարնանը՝ ցանքսի ժամանակ, հողատերը մշակին պատվիրում է արտում ցորեն ցանել: Սակայն վերջինս վարսակ է ցանում: Հնձի ժամանակ հողատերը, արտ գալով և ցորենի փոխարեն վարսակ տեսնելով, զայրացած հարցնում է.

– Ես քեզ պատվիրել էի ցորեն ցանել: Ինչո՞ւ ես վարսակ ցանել:

Մշակը պատասխանում է.

– Ես վարսակ ցանեցի՝ կարծելով, թե պետք է ցորեն աճի:

– Ի՞նչ հիմար բան ես ասում,- բարկանում է հողատերը:

Իմաստուն մշակը պատասխանում է.

– Դու միշտ չար սերմեր ես ցանում, այսինքն՝ չար գործեր ես անում, սակայն հույս ունես բարի պտուղներ քաղել: Ես էլ քեզ նման մտածեցի. վարսակ ցանելով՝ ցորեն ստանալ:

23. ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄԸ

Սամարացին օգնում է վիրավոր մարդուն

Հիսուս Քրիստոսի շուրջը հավաքված մարդիկ տարբեր հարցեր էին տալիս, և նա սիրով պատասխանում էր նրանց: Մի երիտասարդ մոտեցավ նրան և ցանկացավ իմանալ, թե ինչ պետք է անի, որ Աստված սիրի իրեն: Հիսուսը պատասխանեց, որ դրա համար անհրաժեշտ է ամբողջ հոգով ու սրտով հավատալ ու սիրել Աստծուն: Նա ասաց նաև, որ երիտասարդը պետք է **սիրի իր ընկերոջը իր անձի պես**, այսինքն՝ ընկերոջը սիրի այնքան, ինչքան սիրում է ինքն իրեն:

Առակ բարի սամարացու* մասին

Երիտասարդն ու մյուս ներկաները հետաքրքրվեցին, թե ինչպես պարզեն՝ ով է ընկերը, որ իրենց անձի պես սիրեն: Պատասխանի փոխարեն՝ Հիսուսը պատմեց հետևյալ առակը:

Մի մարդ Երուսաղեմից գնում է մեկ ուրիշ քաղաք: Ճանապարհին նրա վրա հարձակվում են ավազակները, ծանր վիրավորում են և կիսամեռ թողնելով՝ հեռանում: Պատահաբար այդ ճանապահով մի հրեա հոգևորական է անցնում: Նա նկատում է վիրավորին, բայց ճանապարհը փոխելով՝ շրջանցում է նրան:

Քիչ անց նույն ճանապարհով անցնում է տաճարի մեկ ուրիշ հրեա պաշտոնյա: Նա մոտենում է վիրավորին, տեսնում նրա ծանր վիճակը, սակայն չի օգնում: Սա էլ է թողնում հեռանում:

Այնուհետև այդ ճանապարհով մի օտարական սամարացի է անցնում: Նա տեսնում է վիրավորին և խղճում նրան: Սամարացին վիրավորի վերքերին ձեթ ու գինի է քսում, կապում դրանք և տանում հյուրանոց: Այսպես մի ամբողջ օր սամարացին խնամում է նրան: Հաջորդ օրը՝ մեկնելուց առաջ, սամարացին հյուրանոցի տիրոջը դրամ է տալիս և խնդրում, որ նա շարունակի խնամել վիրավորին: Իսկ եթե խնամքի համար ավելին ծախսվի, խոստանում է վերադառնալիս վճարել:

Այս առակի միջոցով Հիսուսը սովորեցնում է, որ անհրաժեշտ է բարի և ուշադիր լինել բոլորի նկատմամբ, օգնել նեղության մեջ գտնվողներին, սիրել և հարգել մարդկանց:

Առակի մեկնաբանությունը

Երուսաղեմի տաճարը

Առակի նպատակն է պատասխանել այն հարցին, թե ով է **ճշմարիտ բարեկամը**: Ճանապարհորդը տաճարի պաշտոնյաներին միշտ համարել է իրեն բարեկամ: Բայց նրանք անտեսեցին ծանր վիճակում գտնվող մարդուն: Դրան հակառակ՝ սամարացին, որն օտարական էր, կանգ առավ և օգնեց նրան: Ուրեմն վիրավոր ճանապարհորդի իսկական ընկերը, բարեկամը ոչ թե նրա ազգակից անարժան հոգևորականն ու պաշտոնյան էին, այլ օտար սամարացին, որը գործով ապացուցեց դա:

Սիրել ընկերոջը՝ չի նշանակում սիրել միայն հարազատին կամ ծանոթին, ոչ էլ միայն հաճելի խոսքեր ասել մարդկանց: Չի կարելի սիրել միայն խոսքով: Անհրաժեշտ է սիրել նաև գործով:

Խրատանի

Մի՛ ունեցիր հարյուր դահեկան, այլ ունեցիր հարյուր բարեկամ:

Հավատարիմ բարեկամ, ընկեր ունենալը մեծ երջանկություն է:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ի՞նչ պետք է անի մարդ, որպեսզի Աստված սիրի իրեն:
2. Ի՞նչ պատահեց առակի ճանապարհորդին:
3. Ինչպե՞ս վարվեցին հրեա հոգևորականը և տաճարի պաշտոնյան:
4. Ի՞նչ արեց սամարացին:
5. Ո՞վ է ճշմարիտ բարեկամը:

բ) Փորձե՛ք համառոտ պատմել առակը:

1. Բնութագրե՛ք սամարացուն:
2. Բնութագրե՛ք հրեա հոգևորականին և տաճարի պաշտոնյային:
   Համեմատե՛ք նրանց սամարացու հետ:

դ) Գրե՛ք փոքրիկ շարադրություն՝ փորձելով պատասխանել տրված հարցերին:

1. Տանը, դպրոցում, շրջապատում ովքե՞ր են քո ամենասիրելի մարդիկ:
2. Ինչպե՞ս է արտահայտվում քո սերը և հարգանքը նրանց նկատմամբ:

Բառարան

Սամարիա – քաղաք. գտնվում էր Միջերկրական ծովի արևելյան ափին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՅՈՒԹ

ԼԵՎՈՆԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԴԱՍԸ

Լևոնը հարուստ վաճառականի որդի էր: Նրանք ապրում էին գեղեցիկ պարտեզով շրջապատված շքեղ առանձնատանը: Ծնողները ոչինչ չէին խնայում իրենց զավակի համար, բայց նա շատ գոռոզ էր ու ամբարտավան:
Մի օր կեսօրին, երբ Լևոնն իր գույնզգույն խաղալիքներով խաղում էր պարտեզում, դարպասի կիսաբաց դռներին մի աղքատ տղա մոտեցավ: Նրա ձեռքին հյութալի մոշով լի զամբյուղ կար: Լևոնը անսահման ցանկացավ մոշ ճաշակել, բայց հպարտությունը թույլ չտվեց աղքատ ու կեղտոտ շորերով տղայից հատապտուղ խնդրել: Տղան մի բաժակ ջուր խնդրեց Լևոնից, բայց նա պատասխանեց, թե իրենց թանկարժեք բաժակները նրա համար չեն, և սպառնաց, որ եթե տղան անմիջապես չհեռանա, կարձակի շներին:

Երեկոյան, առանց որևէ մեկին զգուշացնելու, Լևոնը ճանապարհ ընկավ դեպի մոտակա թավուտը: Շուտով նա վայրի մոշի թփեր նկատեց: Նա ձեռքը մեկնեց դեպի պտուղները, սակայն չկարողացավ հասնել: Հանկարծ ոտքը սահեց և ընկավ թփերի տակ գտնվող խոր փոսի մեջ: Նա փոսից ոչ մի կերպ չէր կարողանում դուրս գալ: Արդեն մթնում էր, բայց ոչ ոք չէր լսում նրա օգնության կանչերը: Հանկարծ ոտնաձայներ լսեց: Նա նորից բարձր ձայնով օգնության կանչեց: Մեկ էլ վերևում տեսավ նույն աղքատ տղային: Նա մեծ գումար խոստացավ, եթե տղան օգնի իրեն: Բայց տղան պատասխանեց, որ իրեն պետք չեն նրա փողերը և պառկելով խոտերի վրա՝ ձեռքը մեկնեց դեպի

ներքև և փոսից դուրս քաշեց Լևոնին:

Լևոնը արցունքոտ աչքերով ամոթահար շնորհակալություն հայտնեց և գլխիկոր հեռացավ:

Մի քանի օր անց նրանք կրկին հանդիպեցին: Դեռ հեռվից նկատելով տղային՝ Լևոնն ընդառաջ վազեց և ձեռքը բռնելով՝ հրավիրեց տուն: Միասին ճաշեցին, հետո մինչև ուշ երեկո խաղացին Լևոնի խաղալիքներով: Հեռանալուց առաջ Լևոնը նոր ընկերոջը խաղալիք նվիրեց: Տղան անակնկալից շփոթված հարցրեց.

- Ի՞նչ է փոխվել քո կյանքում, ինչո՞ւ այսօր այսպես հոգատար վերաբերվեցիր ինձ:

- Իմ այս վերաբերմունքը ցեխոտ փոսի մեջ գտա, - շիկնելով պատասխանեց Լևոնը:

Այդ օրվանից Լևոնը կտրուկ փոխվեց: Ցեխոտ փոսի դեպքը նրա կյանքի ամենալավ դասը եղավ, իսկ աղքատ տղան դարձավ նրա ամենամտերիմ ընկերը:

24. Մոլորյալ որդու վերադարձը

Մի հարուստ մարդ ուներ երկու որդի: Կրտսեր որդին հորից խնդրում է ժառանգության իր բաժինը: Հայրը ստիպված էր ունեցվածքը բաժանել երկու որդիների միջև: Ավագ որդին մնաց հոր մոտ, իսկ կրտսերն իր ժառանգությունը վաճառեց, վերցրեց դրամը և գնաց օտար երկրներ: Այնտեղ նա շատ երիտասարդ ընկերներ գտավ, որոնց հետ զվարճանում էր, խնջույքներ կազմակերպում, աջ ու ձախ դրամ վատնում*: Բայց երբ դրամները սպառվեցին, բոլորը լքեցին նրան ու հեռացան:



Մոլորյալ որդու վերադարձը

Ապրելու հնարավորություն չունենալով՝ նա սկսեց աշխատանք փնտրել: Մի ագարակատեր տղային ընդունեց որպես ծառա: Նրա աշխատանքը ագարակատիրոջ խոզերը պահելն էր: Լինում էին օրեր, երբ նա ուտելու ոչինչ չէր ունենում: Ծանր զրկանքներն* ու տառապանքները ստիպեցին տղային վերլուծել իր անցած ուղին: Նա կարոտով հիշեց իրենց տունը, իր բարի հորն ու եղբորը: Հիշեց, որ իրենք շատ ծառաներ ունեին, և նրանք բոլորն էլ հանգիստ ու ապահով ապրում էին իր հոր ագարակում: Մինչդեռ ինքը օտար վայրերում սոված ու ծանր կյանքով է ապրում:

Եվ նա զղջաց իր գործած սխալների համար: Տղան հասկանում էր, որ աններելի են իր արարքները, բայց որոշեց վերադառնալ հոր մոտ և խնդրել, որ նա ների իրեն: Որդին պատրաստ էր նույնիսկ ծառա աշխատել հոր մոտ:

Մոլորյալ* (անառակ) որդին ճանապարհ ընկավ դեպի հայրական տուն: Չնայած նրա հագուստները պատառոտված էին, և ինքն էլ շատ էր փոխվել, բայց ծերունի հայրը անմիջապես ճանաչեց զավակին: Նա ընդառաջ վազեց որդուն, գրկեց և ներողամտորեն համբուրեց նրան:

Հայրը ծառաներին հրամայեց ընտիր հագուստներ հագցնել որդուն և նրա վերադարձը նշելու համար ամենագեր ցուլը մորթել:

Ծառաներն անմիջապես կատարեցին տիրոջ հրամանը և խնջույքի սեղան պատրաստեցին:

Երեկոյան դաշտից վերադարձավ ավագ եղբայրը: Երգի և ուրախության ձայներ լսելով՝ նա ծառաներից մեկին հարցրեց առիթը: Ծառան պատմեց հոր կազմակերպած խնջույքի մասին:

Մեծ եղբայրը ուրախանալու փոխարեն բարկացավ և որոշեց ներս

չմտնել: Հայրը իմացավ այդ մասին, դուրս եկավ և խնդրեց ավագ որդուն ներս գալ: Որդին հորը պատասխանեց, որ այսքան տարի երբեք չի հակառակվել հոր կամքին: Այդ հավատարմության դիմաց հայրը նույնիսկ մի ուլ չի մորթել իր համար: Իսկ եղբոր համար, որը վատնել էր իրենց հարստության կեսը և արժանի չէր տուն մտնելու, հայրը մեծ խնջույք է կազմակերպել:

Ծերունին հանդարտացրեց բարկացած որդուն՝ ասելով, որ նա միշտ իր մոտ է եղել՝ հարուստ ու բարեկեցիկ: Մինչդեռ կրտսեր որդին, որը շեղվել էր ճիշտ ճանապարհից, զրկվել հարստությունից ու պատվից, այժմ զղջացել է և տուն վերադարձել: Իսկ **զղջացողին պետք է ներել**:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ինչպե՞ս օգտագործեց ժառանգության իր բաժինը կրտսեր որդին:
2. Ի՞նչ վիճակում հայտնվեց նա, երբ վատնեց ունեցվածքը:
3. Ինչո՞ւ նա որոշեց վերադառնալ հայրական տուն:
4. Հայրն ինչպե՞ս ընդունեց որդու վերադարձը:
5. Ինչպե՞ս վարվեց ավագ եղբայրը:
6. Ինչպե՞ս հայրը հաշտեցրեց երեխաներին:

բ) Եկեք քննարկենք:

1. Համեմատի՛ր երկու եղբայրներին:
2. Ձեր կարծիքով՝ ի՞նչ է սովորեցնում այս առակը:
3. Համառոտ պատմե՛ք, թե ձեր որ արարքներն են ուրախացնում, և որոնք՝ տխրեցնում ձեր ծնողներին:

Հարստացնենք մեր բառապաշարը

Վատնել, մեղանչել, զրկանք, խնջույք, մոլորյալ:

Բառարան

Մոլորյալ – ճիշտ ճանապարհից շեղված:
Վատնել – զուր տեղը ծախսել, շռայլել:
Մեղանչել – մեղք գործել:
Զրկանք – տառապանք, նեղություն:

Լուսցուցիչ այուք

ԱՐԴԱՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Մի պալատական պարտք էր թագավորին հազար դահեկան: Նա երկար ժամանակ չէր կարողանում վճարել պարտքը: Բարկացած թագավորը պարտքը վերադարձնելու համար հրամայեց՝ պալատականին վաճառել գերության:

Պալատականը աղաչեց գթասիրտ և ներողամիտ լինել: Նա խնդրում էր ժամանակ տալ և խոստանում, որ անպայման կվերադարձնի պարտքը:

Թագավորը լավ գիտեր, որ նա չի կարող վճարել, բայց գթաց, զիջեց պարտքը և հրամայեց ազատ արձակել:

Այդ նույն պալատականը գնաց իր ծառաներից մեկի մոտ, որն իրեն պարտք էր հարյուր դահեկան: Պալատականը պահանջեց վճարել պարտքը և հաշվի չառնելով նրա աղաչանքն ու խնդրանքը՝ նրան բանտ նետել տվեց: Մյուս ծառաները, երբ տեսան այս ամենը, շատ տխրեցին, գնացին ու այդ մասին պատմեցին թագավորին: Թագավորը կանչեց պալատականին և ասաց. «Չա՛ր ծառա, ես քո ամբողջ պարտքը զիջեցի և ներեցի քեզ: Մի՞թե դա քեզ չսովորեցրեց, որ դու էլ ներողամիտ լինես ուրիշների նկատմամբ»:

Բարկացած թագավորը հրամայեց բանտարկել պալատականին:

25. ՀԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հիսուսը գնում է Երուսաղեմ

XIII դարի մանրանկար. «Մուտքը Երուսաղեմ»

Երուսաղեմից դեպի արևելք բարձրանում է Ձիթենյաց լեռը: Լեռան ստորոտում գտնվում էր Բեթանիա գյուղը: Մի քանի օր այս գյուղում են ապրել Հիսուս Քրիստոսն ու իր աշակերտները:

Որոշ ժամանակ անց նա իր աշակերտների հետ ճանապարհ ընկավ դեպի Երուսաղեմ՝ մասնակցելու Զատկի տոնին: Աշակերտները ենթադրում էին նաև, թե նա հաստատելու է իր թագավորությունը: Շատ մարդիկ նրա հետևից գնում էին դեպի քաղաք:

Բեթանիայից դուրս գալուց հետո աշակերտները մի ավանակ բերեցին, և Հիսուսը ճանապարհը շարունակեց ավանակով: Երուսաղեմի դարպասների մոտ հավաքված մարդիկ ուրախությամբ ու ցնծությամբ էին դիմավորում Հիսուսին: Նրանք ձիթենու և արմավենու ճյուղեր էին փռում նրա ճանապարհին:

Երբ Հիսուսը մտավ Երուսաղեմ, մարդիկ սկսեցին հարցնել նրա մասին:

- Նա **Հիսուս մարգարեն** է՝ Նազարեթ քաղաքից, - պատասխանում էին նրան ճանաչողները:

Շատերն սկսեցին պատմել նրա գործերի ու կատարած հրաշքների մասին: Մտնելով քաղաք՝ Հիսուսը գնաց տաճար, որտեղ բժշկեց կույր ու հաշմանդամ մարդկանց: Երեկոյան նա վերադարձավ Բեթանիա:

Երուսաղեմ քաղաքի մուտքը մեր օրերում

Հաջորդ օրը Հիսուսը կրկին գնաց Երուսաղեմ և մտավ տաճար: Տաճարում նա տեսավ մարդկանց, ովքեր առևտուր էին անում: Զայրացած Հիսուսը վռնդեց նրանց՝ ասելով, թե տաճարը աղոթքի տուն է և ոչ թե վաճառատուն:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Որտե՞ղ էր գտնվում Հիսուսը Երուսաղեմ գնալուց առաջ:
2. Ինչո՞ւ Հիսուսն իր աշակերտների հետ գնաց Երուսաղեմ:
3. Ինչպե՞ս էին մարդիկ դիմավորում Հիսուսին Երուսաղեմի ճանապարհին:
4. Ի՞նչ էր անում Հիսուսը Երուսաղեմում:
5. Ո՞ւմ տեսավ Հիսուսը: Ինչո՞ւ Հիսուսը զայրացավ և վռնդեց նրանց տաճարից:
6. Ի՞նչ ասաց Հիսուսը տաճարի մասին:

բ) Ընթերցե՛ք լրացուցիչ նյութը, փորձե՛ք բացատրել Հիսուսի տված պատասխանը փարիսեցիներին: Պատասխանը քննարկե՛ք նախ խմբերով, հետո՝ ամբողջ դասարանով:

Բառարան

Քահանայապետ – բարձրաստիճան հոգևորական:

Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց հայկական եկեղեցու գավիթը

Լրացուցիչ նյութ

ԿԱՅՍՐԻՆԸ՝ ԿԱՅՍՐԻՆ, ԱՍՏԾՈՒՆԸ՝ ԱՍՏԾՈՒՆ

Հիսուսի քարոզներն ու գործերը խիստ անհանգստացնում ու վախ էին պատճառում հրեա քահանայապետերին* և փարիսեցիներին: Նրանք որոշեցին Հիսուսին մատնել հռոմեական կուսակալին: Դրա համար ընտրեցին մի քանի խաբեբաների: Իրենց արդար ձևացնելով՝ նրանք եկան Հիսուսի մոտ ու ասացին.

– Վարդապե՛տ, գիտենք, որ ճշմարտախոս ես և Աստծու խոսքը ճշմարտությամբ ես ուսուցանում: Ասա՛, օրինավո՞ր է մեզ համար հռոմեական կայսրին հարկ տալը, թե՞ ոչ:

Հիսուսը, հասկանալով նրանց խորամանկությունն ու չար դիտավորությունը, ասաց.

– Ցո՛ւյց տվեք ինձ մի դահեկան:

Երբ նրանք մի մետաղադրամ բերեցին, Հիսուսը հարցրեց նրանց.

– Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է:

– Կայսրինը, - պատասխանեցին նրանք:

– Գնացե՛ք, տվե՛ք **կայսրինը՝ կայսրին և Աստծունը՝ Աստծուն,** – ասաց Հիսուսը:

Արծաթե դրամ հռոմեական կայսրի պատկերով, I դար

26. ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ

Վերջին ընթրիքից առաջ

Հիսուսն ու իր աշակերտները Բեթանիա գյուղում էին, երբ ժողովուրդը պատրաստվում էր Զատկի տոնին: Հիսուսը Պետրոսին և Հովհաննեսին պատվիրեց գնալ Երուսաղեմ՝ այնտեղ տոնի պատրաստություններ տեսնելու համար: Աշակերտները Երուսաղեմում գտան մի մեծ, զարդարված վերնատուն:

Երեկոյան Հիսուսն իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ:



Խորհրդավոր ընթրիք

Հիսուսի վերջին ընթրիքը

Վերնատանը, բաժակ վերցնելով, Հիսուսն օրհնեց սեղանը և աշակերտներին ասաց, որ սա վերջին Զատիկի ընթրիքն է, որ անցկացնում է նրանց հետ: Աշակերտները չհասկացան Հիսուսի խոսքերի իմաստը:

Դրանից հետո Հիսուսը վերցրեց ջուրը և սկսեց լվանալ իր աշակերտների ոտքերը: Չնայած աշակերտները դիմադրում էին, սակայն Հիսուսը հերթով լվաց բոլորի ոտքերը:

Լվանալով աշակերտների ոտքերը՝ Հիսուսը ցանկանում էր ցույց տալ, որ պետք է սիրով ու խոնարհությամբ վերաբերվել ոչ միայն իրար, այլև բոլոր մարդկանց:

Խորհրդավոր ընթրիք

Մատնության բացահայտումը

Ուտելվայից հետո, երբ Հիսուսն ու իր աշակերտները նստեցին սեղանի շուրջը ու սկսեցին ընթրել, Հիսուսն ասաց.

- Ձեզանից մեկը մատնելու է ինձ:

Աշակերտներից յուրաքանչյուրը սկսեց մտածել, թե ում մասին է խոսքը: Հովհաննես առաքյալը, որ Քրիստոսի սիրելի աշակերտն էր ու մոտ էր նստած նրան, հարցրեց, թե ով է մատնիչը:

- Նա, որին ես կտամ այս պատառը, - պատասխանեց Հիսուսը և պատառը մեկնեց Հուդային: Հուդան շփոթված վերցրեց այն և դուրս գնաց:

Ընթրիքն ավարտելուց հետո Հիսուսն իր աշակերտների հետ գնաց Ձիթենյաց լեռան լանջին գտնվող Գեթսեմանիի պարտեզ՝ աղոթելու:

Հիսուսի մատնությունը

Վերնատնից դուրս գալով՝ Հուդան գնաց քահանայապետերի մոտ: Նա ստացավ խոստացված 30 արծաթ* դրամը և զինվորների ու սպասավորների մի խումբ վերցնելով՝ շարժվեց դեպի Գեթսեմանիի պարտեզը: Քահանայապետերն ու փարիսեցիները, զինված սրերով ու մահակներով, շարժվեցին նրանց հետևից: Հուդան պայմանավորվել էր նրանց հետ, թե ում որ ինքը համբուրի, նա է Հիսուսը: Մոտենալով Հիսուսին՝ Հուդան ողջունեց նրան ու համբուրեց*:

Հիսուսին ձերբակալեցին ու տարան:

Հուդայի համբույրը

Հարցեր և առաջադրանքներ

ա) Եկեք հիշենք:

1. Ո՞ր տոնին էր պատրաստվում ժողովուրդը, երբ Հիսուսն իր երկու աշակերտներին ուղարկեց Երուսաղեմ:
2. Ինչո՞ւ Հիսուսը լվաց իր աշակերտների ոտքերը:

3. Ի՞նչ գնով Հուդան համաձայնեց մատնել Հիսուսին: Ո՞րն էր լինելու մատնության նշանը:

բ) Քննարկենք:

1. Ինչպե՞ս եք գնահատում աշակերտների ոտքերը լվանալը:
2. Ի՞նչ էր դրանով ցանկանում հասկացնել նրանց Հիսուսը:

Հարստացնենք մեր բառապաշարը

Հուդայի համբույր, վերնատուն:

Բառարան

Հուդայի համբույր – Հիսուսին մատնելուց հետո այդ արտահայտությունը ստացել է մատնության, դավաճանության իմաստ:
Երեսուն արծաթ – ունի «մատնության գին» իմաստը:

Վերջին ընթրիքի վայրը՝ Վերնատունը

27. Հիսուս Քրիստոսի խաչելությունը

Հիսուսը Պիղատոսի առջև



Հիսուսը Պիղատոսի առջև

Մատնության հաջորդ առավոտյան հրեա քահանայապետերը Հիսուսին տարան Պիղատոս Պոնտացու մոտ: Վերջինս այդ ժամանակ Հրեաստանի հռոմեական կուսակալն* էր: Պիղատոսը քահանայապետերին հարցրեց, թե որն է Հիսուսի մեղքը: Նրանք սկսեցին չարախոսել՝ ասելով, թե Հիսուսը մոլորեցնում է մարդկանց, արգելում կայսրին հարկեր տալ և իրեն թագավոր է անվանում: Պիղատոսը սկսեց հարցեր տալ Հիսուսին: Լսելով նրան՝ կուսակալը պատասխանեց, որ ինքը Հիսուսի արարքների մեջ որևէ հանցանք չի տեսնում:

Մահվան դատավճիռը

Համոզվելով, որ Հիսուսն անմեղ է, Պիղատոսը կանչեց քահանայապետերին, փարիսեցիներին և այլ մարդկանց: Նա ասաց, որ Հիսուսն արդար է, և ինքը մտադիր է ազատել նրան: Սակայն այդտեղ հավաքվածները սկսեցին գոռգոռալ և պահանջել, որ Հիսուսը մահապատժի ենթարկվի:

Սովորաբար տոնի առթիվ մահվան դատապարտված որևէ բանտարկյալ ազատ էր արձակվում: Այդ ժամանակ բանտարկվել էր նաև Բարաբբա անունով մի մարդասպան:

Երբ Պիղատոսը հարցրեց, թե ում ազատի՝ Հիսուսի՞ն, թե՞ Բարաբբային, հավաքված ամբոխը սկսեց աղաղակել ու պահանջել, որ ազատ արձակվի մարդասպանը: Տեսնելով, որ ոչինչ չի օգնում, Պիղատոսը ջուր վերցրեց և բոլորի առաջ սկսեց լվանալ ձեռքերը: Այդ անելով՝ նա ցանկանում էր հասկացնել, որ թեև ինքը համաձայն չէ Հիսուսին մահապատժի ենթարկելուն, սակայն հրեա քահանայապետերը կարող են վարվել այնպես, ինչպես իրենք են կամենում:

Ճանապարհ դեպի Գողգոթա

Այնուհետև զինվորները Հիսուսին դուրս տարան: Քանի որ շատերը Հիսուսին թագավոր էին անվանում, նրան ծաղրուծանակի ենթարկելու համար ուսերին **կարմիր վերնազգեստ*** գցեցին ու գլխին թագի փոխարեն փշե պսակ դրեցին:

Հիսուսն իր ուսերին տանում էր փայտե խաչը, որովհետև, սովորության համաձայն, դատապարտյալն ինքը պիտի տաներ պատժամիջոցը՝ իր խաչը:

Անցնելով Երուսաղեմի նեղ, ոլորապտույտ փողոցներով՝ նրանք հասան խաչելության վայրը՝ Գողգոթա: Դա քաղաքից դուրս գտնվող բլուր է:

Այստեղ Հիսուսին մեխերով գամեցին խաչին: Այնուհետև խաչը կանգնեցրին նախապես պատրաստված փոսի մեջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ւմ մոտ տարան Հիսուսին մատնության հաջորդ օրը: Ինչո՞ւ:
2. Ի՞նչ եզրակացության եկավ Պիղատոսը Հիսուսի հետ զրույցից հետո:
3. Ինչո՞ւ ավելի ուշ նա ստիպված եղավ փոխել իր որոշումը:
4. Ինչպե՞ս Պիղատոսն արտահայտեց իր անհամաձայնությունը Հիսուսին մահվան դատապարտելու որոշման վերաբերյալ:
5. Հիսուսն իր ուսերին տանում էր խաչը: Ինչո՞ւ:

Հարստացնենք մեր բառապաշարը

Ձեռքերը լվանալ, տանել իր խաչը, փշե պսակ, ճանապարհ դեպի Գողգոթա, խաչի ճանապարհ:

Բառարան

Կուսակալ – կառավարիչ, փոխարքա: Հրեաստանը I դարում Հռոմեական կայսրության մի մասն էր և ենթարկվում էր կայսրի կողմից նշանակված կուսակալին:

Կարմիր վերնազգեստ – ծիրանի: Այսպիսի հագուստ կրում էին թագավորները:

Խաչելություն

Լրացուցիչ նյութ

Հիսուսը դատապարտվեց խաչելության: Ինչպես իմացաք, դատապարտյալն ինքը պետք է տաներ իր պատժամիջոցը՝ խաչը: Վերջին շաբաթվա չարչարանքից հետո Հիսուսը մարմնով թուլացել էր: Խաչը ծանր էր, տանելը՝ դժվար: Այդ պատճառով զինվորները ճանապարհին բռնեցին **Սիմոն Կյուրենացի** անունով մի մարդու, որը հանդից տուն էր վերադառնում, և ստիպեցին նրան՝ Հիսուսին օգնելու համար բարձրացնել նրա խաչափայտը:



Գողգոթա

28. ՀԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԱՆ ՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուսի թաղումը

Խաչից իջեցումը

Հիսուսի խաչելության օրը քահանայապետերը գնացին Պիղատոս Պոնտացու մոտ, որպեսզի խաչվածներին խաչից իջեցնելու թույլտվություն ստանան: Շաբաթ օրը տոնական օր էր, և նրանք չէին ցանկանում, որ այդ օրը խաչի վրա մարդ մնար: Պիղատոսը զինվորներ ուղարկեց Գողգոթա: Նրանք վերադարձան և հայտնեցին, որ Հիսուսն արդեն մահացել է:

Այնուհետև Պիղատոսի մոտ եկավ Հովսեփ անունով մի հարուստ ու անվանի մարդ: Հովսեփը Հիսուսի հետևորդներից էր, բայց խուսափում էր այդ մասին ասել: Պիղատոսը թույլ տվեց նրան Հիսուսի մարմինն իջեցնել խաչից:

Խաչելության վայրից ոչ հեռու մի պարտեզ կար, որտեղ գտնվող ժայռի մեջ նախօրոք Հովսեփը գերեզման էր փորել: Հիսուսի մարմինը դրեցին այդտեղ և քարայրի մուտքը փակեցին մի մեծ քարով:

Նույն օրը քահանայապետերն ու փարիսեցիները գնացին Պիղատոսի մոտ և խնդրեցին Հիսուսի գերեզմանի մոտ պահակներ դնել, որ Քրիստոսի աշակերտները նրա մարմինը չտանեն ու չասեն, թե մեռելներից **հարություն*** առավ: Արտոնություն ստանալուց հետո քահանայապետերը գերեզմանի վրա պահակներ դրեցին:

Հիսուսի հարությունը

Հրեշտակը ավետում է Հիսուսի հարությունը

Հիսուսի մահվանից երեք օր անց՝ գիշերը, ուժեղ երկրաշարժ եղավ: Մի հրեշտակ իջավ երկնքից ու գլորեց քարայրի մուտքի առջև դրված քարը: Հիսուս Քրիստոսը հարություն առավ ու դուրս եկավ քարայրից: Գերեզմանը հսկող զինվորները այդ տեսնելով, վախից ուշագնաց ընկան:

Լուսաբացին Հակոբոս առաքյալի մայր Մարիամը և մի քանի կանայք եկան այն այգին, որտեղ Հիսուսի գերեզմանն էր, որպեսզի խունկով ու անուշահոտ յուղերով օծեն



Հիսուսի հարությունը

նրա մարմինը: Մոտենալով՝ կանայք զարմացած տեսան, որ քարայրի առջև դրված քարը գլորված է, իսկ գերեզմանը դատարկ է: Վախեցած կանայք շտապեցին Քրիստոսի աշակերտներին հայտնելու իրենց տեսած հրաշքի մասին: Աշակերտները շատ ուրախացան՝ իմանալով, որ իրենց սիրելի Ուսուցիչը հարություն է առել:

Համաձայն Նոր կտակարանի՝ Հիսուս Քրիստոսը հարություն առնելուց հետո 40 օր շրջեց երկրի վրա: Այդ ընթացքում նա մի քանի անգամ երևաց աշակերտներին: Ձիթենյաց լեռան վրա օրհնելով աշակերտներին՝ Հիսուսը պատվիրեց նրանց գնալ և տարբեր ազգերի մեջ տարածել իր պատգամները: Ապա հայտնվեց մի սպիտակ ամպ և, պատելով Հիսուսին, բարձրացրեց վեր: Այսպես Հիսուս Քրիստոսը **համբարձվեց*** երկինք:

Հիսուս Քրիստոսի համբարձումը

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Հովսեփը և ինչո՞ւ էր գնացել Պիղատոսի մոտ:
2. Ինչո՞ւ Հիսուսի գերեզմանի մոտ պահակներ դրվեցին:
3. Ի՞նչ տեղի ունեցավ Քրիստոսի հարության պահին և հաջորդ առավոտյան:
5. Ի՞նչ է մեզ պատմում Նոր կտակարանը Հիսուսի հարությանը հաջորդած քառասուն օրերի մասին: Ի՞նչ է պատվիրում Քրիստոսն իր աշակերտներին Ձիթենյաց լեռան վրա:

Բառարան

Հարություն առնել – մահացածի կենդանանալը:
Համբարձվել – վեր բարձրանալ, վեր ելնել:

Լուսաբուխ նյութ

Գեղարդ

Ս. Էջմիածնի թանգարանում պահվող գեղարդը

Պիղատոս Պոնտացու հրամանով զինվորները գնացին և տեսան, որ Հիսուսն արդեն մահացել է: Զինվորներից մեկը դրանում համոզված լինելու համար գեղարդով (նիզակ) խոցեց նրա կողը:

Այդ գեղարդը, ըստ ավանդության, Հայաստան բերվեց և երկար ժամանակ պահվում էր Ս. Էջմիածնում: Հետագայում, երբ սկսվեցին մոնղոլական արշավանքները, գեղարդը տեղափոխվեց մի ապահով վայր՝ Այրիվանք, որը դրանից հետո կոչվեց Գեղարդավանք: Այժմ այդ գեղարդը պահվում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում:

Բառարան

Ագարակ – արտ, դաշտ, բանջարանոց:

Անդամալույծ – հաշմանդամ, շարժվելու կարողությունից զրկված:

Ապառաժ – քարաժայռ, քարքարոտ տեղ:

Առաքյալ – առաքված, ուղարկված: Առաքյալներ անվանվեցին Քրիստոսի 12 աշակերտները, որոնք ուղարկվեցին քարոզելու քրիստոնեությունը:

Աստվածացնել – մեծարել, փառքի ու պատվի արժանացնել, համարել աստված:

Ավետել – բարի լուր հայտնել:

Բարեպաշտ – բարի, ազնիվ, բարի գործեր կատարող մարդ:

Բորոտ – անբուժելի, վարակիչ մաշկային հիվանդությամբ տառապող մարդ:

Գանձանակ – դրամը պահելու տեղ:

Դպիր – հրեական կրոնական օրենքի գիտակ:

Դրախտ – աստվածային պարտեզ, այգի:

Երեսուն արծաթ – ունի «մատնության գին» իմաստը:

Երև անդ – այնտեղ երևաց: Ըստ ավանդության՝ այսպես է առաջացել Երևան քաղաքի անվանումը:

Զինանշան – պետության, իշխանության խորհրդանիշ:

Զղջալ – վատ արարքների համար ափսոսալ, հրաժարվել վատ արարք կատարելուց:

Զրկանք – տառապանք, նեղություն:

Ընծա – նվեր:

Ընկճվել – վհատվել, հուսահատվել:

Ժառանգության իրավունք – այստեղ նկատի է առնված գահաժառանգությունը, որի համաձայն՝ գահը փոխանցվում էր ժառանգաբար՝ հորից որդուն:

Իջևանատուն – հյուրանոց, պանդոկ, գիշերելու տեղ:

Լայնալիճ – մեծ աղեղ:

Լումա – մանր դրամ:

Խաղողի որթ – խաղողի տունկ, վազ:

Խնկարկել – խունկ ծխեցնել: Խունկը ծառի խեժից պատրաստված անուշահոտ նյութ է, որը օգտագործվում է եկեղեցական արարողությունների ժամանակ:

Խոստովանել – գիտակցել սեփական սխալներն ու անկեղծ պատմել:

Կարմիր վերնազգեստ – ծիրանի: Այսպիսիք կրում էին թագավորները:

Կենաց ծառ – կյանքի ծառ, որի պտուղները, ըստ Աստվածաշնչի, պարգևում են անմահություն:

Կուռք – փայտից, քարից, մետաղից կամ այլ նյութից պատրաստված արձան, որին վերագրվում էր գերբնական կարողություն:

Կուսակալ – կառավարիչ, փոխարքա: Հրեաստանը I դարում Հռոմեական կայսրության մի մասն էր և ենթարկվում էր կայսրի կողմից նշանակված կուսակալին:

Համբարձվել – վեր բարձրանալ, վեր ելնել:

Հարություն առնել – մահացածի վերակենդանանալը:

Հիսուս - թարգմանաբար նշանակում է փրկիչ:

Հյուսն - փայտագործ վարպետ, փայտե իրեր, առարկաներ պատրաստող:

Հուդայի համբույր – Հիսուսին մատնելուց հետո այդ արտահայտությունը ստացել է մատնության, դավաճանության իմաստ:

Մարդահամար – երկրի բնակիչներին հաշվառելու գործողություն:

Մաքսավոր – հարկահավաք:

Մեղք – անթույլատրելի արարք, հանցանք:

Մկրտել – ընկղմել ջրի մեջ, մաքրել մեղքերը, քրիստոնյա դառնալու պարտադիր պայման:

Մոգ – այդպես էին կոչվում Հին Արևելքում իմաստուն ու կրթված մարդիկ, որոնք ուսումնասիրում էին տարբեր գիտություններ և հատկապես աստղագիտություն:

Մոլորեցնել – խաբել, շեղել ճիշտ ճանապարհից:

Մոլորյալ – ճիշտ ճանապարհից շեղված:

Մսուր – գոմում այն տեղը, ուր կենդանիների համար խոտ են լցնում:

Որոմ – ցորենին շատ նման, դառնահամ մոլախոտ:

Պաշտամունք – հարգանք, մեծարանք, հավատ, սեր:

Պատմուճան – թիկնոց, հնում ընդունված սովորությամբ այն նվիրում էին նրան, ով պետք է դառնար հայրական տան ավագը և ժառանգորդը:

Պատվիրան – ուսուցում, խորհուրդ, պատգամ, Աստծու կամք, որը պետք է կատարվի:

Պարարտ – բերրի, արգավանդ, հարուստ:

Սատանա – անձնավորված չար ոգի, խարդախ, խաբեբա, խորամանկ:

Սուրբ – մաքուր, անարատ, անբիծ:

Սուրբ գիրք – Աստվածաշունչը՝ քրիստոնյաների նվիրական, սրբազան գիրքը:

Վատնել – զուր տեղը ծախսել, շռայլել:

Վարդապետ – Աստծու պատվիրանների գիտակ, ուսուցանող, հոգևոր աստիճան:

Վերնատուն – տան, շենքի վերևի հարկում գտնվող սենյակ:

Տապան – նավ:

Տեր – այդպես են անվանում և դիմում Աստծուն:

Ուխտ – պայման, դաշինք, համաձայնություն:

Փարիսեցի – օրենքի և կրոնական ավանդույթների կեղծ պահապան:

Քահանայապետ – բարձրաստիճան հոգևորական:

Քաոս – անկանոն, անկարգ, խառնակ վիճակ:

Քարոզել – բացատրել և ուսուցանել:

Քրիստոս – թարգմանաբար նշանակում է օծյալ:

Քրիստոսից առաջ – մեր թվարկությունից առաջ, այսինքն՝ մինչև Քրիստոսի ծնունդը: Գործածական է նաև կարճ ձևը՝Ք.ա.:

Օրհներգ – օրհնության երգ, գովաբանության երգ, բանաստեղծություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Աստվածաշունչ մատյան

1. Աստվածաշունչ 6

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Հին կտակարան

2. Աշխարհի և մարդու ստեղծումը 9
3. Նոյը և ջրհեղեղը 12
4. Արարատ լեռը 15
5. Բաբելոնի աշտարակաշինությունը 18
6. Աբրահամ Նահապետ: Իսահակ և Հակոբ 21
7. Հովսեփ 23
8. Մովսես Մարգարե 25
9. Դավիթ թագավոր 28
10. Սողոմոն Իմաստուն 30
11. Բաբելոնյան գերություն 33

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Նոր կտակարան

12. Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը 35
13. Հիսուս Քրիստոսի ծնունդը 37
14. Պատանին տաճարում 41
15. Հիսուս Քրիստոսի մկրտությունը 44
16. Հիսուս Քրիստոսի փորձությունները 48
17. Տասներկու աշակերտների ընտրությունը 52
18. Հիսուսը օգնում է մարդկանց 55
19. Իմաստուն խորհուրդներ 58
20. Ամենամեծ նվերը 61
21. Սերմնացանի առակը 64
22. Որոմների առակը 68
23. Ճշմարիտ բարեկամը 70
24. Մոլորյալ որդու վերադարձը 74
25. Հիսուսի մուտքը Երուսաղեմ 77
26. Վերջին ընթրիքը 80
27. Հիսուս Քրիստոսի խաչելությունը 83
28. Հիսուսի թաղումն ու հարությունը 86

Բառարան 89

Աշոտ Ղուկասյան
Վարդան Պարսամյան
Առաքել Գյուլբուդաղյան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք հանրակրթական դպրոցի
4-րդ դասարանի համար

Գեղարվեստական և տեխնիկական խմբագիր՝ Մ. Պետրոսյան

Համակարգչային շարվածքը՝ Հ. Հովհաննիսյանի և Ա. Միրզաթունյանի

Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը 6 պայմ. մամուլ:
Պատվեր՝ 717: Տպաքանակը՝ 65 000 օրինակ:
Կրթական բարեփոխումների կենտրոնի հրատարակչություն
Երևան, Տիգրան Մեծի 67.

Տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում